Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 11.01.2023թ. չորեքշաբթի թիվ 1-2 (1078-1079)

Առաջին

«**Կրթություն**» շաբաթաթերթի 2023 թվականի **առաջին** համարը սկսենք **ինքնավստահ** խմբագրականով. որպեսզի ինքնվստահ լինեն մեր հետագա բոլոր հրապարակումները ողջ տարվա ընթացքում... Ժողովուրդն է ասում, չէ՞, *ինչպես տարին սկսես, այնպես էլ այն կշարունակվի*: Իսկ ինքնավստահություն պետք է մեզանից յուրաքանչյուրին եւ մեզ՝ մեր հավաքական էության մեջ: Ինչո՞ւ հենց **ինքնավստահություն**, որ առաջարկում ենք նաեւ որպես **տարվա նշանաբան**: Որովհետեւ մեր ժողովրդին դա՛ է պակասում ահա արդեն հազար տարի...

Յուրաքանչյուր հայ, կամ գոնե մեզանից շատերը, իբրեւ հանրագիտարանային ճշմարտություն, գիտեն, որ, ասենք, առաջինը մշակովի բույսերի ցանքսով զբաղվել են Հայկական Լեռնաշխարհի բնակիչները: Առաջինը ձին ընտելացրել, առաջինը մետաղը այստեղ են ձուլել: Ժամանակը բաժանել են օրերի, ամիսների, տարիների, առաջին հացը այստեղ են թխել: Անիվի գյուտը այստեղ են արել, աստղային երկինքն առաջինը այստեղ են դիտել... էլ չշարունակենք. միշտ առաջինը, միշտ առաջինը... Բայց արի ու տես, որ որքան էլ պարզ ու անհերքելի, այս ճշմարտությունները մեր քաղքենուն զայրացրել են միշտ, եւ նա շարունակել է կարդալ, խոսել, մտածել ա՛յլ լեզուներով, իրեն համարել ա՛յլ մշակույթի կրող, լավագույն դեպքում՝ աշխարհաքաղաքացի, որ սովորություն ունի միշտ խորհուրդ տալ. «*Դա եղել է անցյալում, իսկ այսո՞ր*»: Այս հարցը դիվային էություն ունի իր մեջ ամբարած, որ միանգամից անվստահության թույն է կաթեցնում մեր մտքի վրա ու կաշկանդում պարզ համեմատությամբ կրկին տեսնել, որ այսօր էլ, ինչպես միշտ, մենք մնում ենք նույնը՝ **միշտ առաջինը**...

Էպոսը ճշգրտորեն արտացոլում է տվյալ ժողովրդի հավաքական բնավորության առանձնահատկությունները: Որքան քաջ, այնքան միամիտ, որքան հզոր, այնքան անվստահ... Անպայման պիտի կողքից մեկը հուշի, որ **Դավիթը** իրեն թափ տա ու դուրս գա հորից: Անպայման այլազգի մի գիտնական պիտի հնարի *Ուրարտուն*, որ մենք մոռանանք *Արարատը*, կամ էլ այլազգին պիտի փորձի *հնդեվրոպական մայր լեզվի հայրենիքը* փնտրել **Հայկական Լեռնաշխարհում**, իսկ մեր պատմաբանները մեր պատմության հազարամյակները շարունակեն դիտել իբրեւ կազմավորմա՞ն ժամանակաշրջան ու մեր հայրենիքում տասնյակ անհասկանալի ժողովուրդներ, լեզուներ ու քաղաքակրթություններ հնարեն... Ինչ է թե հանկարծ մեզ չասեն **նացիոնալիստ**: Է՛, եղբայր, մեզ համար մի՞շտ է 1937 թվական... Այդ վախը դեռ չե՞նք հաղթահարել... Անցել է արդեն 85 տարի... Գոնե հիմա՛ դույզն-ինչ ինքնավստահություն ձեռք բերենք. գոնե օտա՛ր գիտնականների չափ փառաբանենք մեր հայրենիքը:

Այդ անվստահությունը չէ՞, արդյոք, պատճառը, որ հայը, ինչ երկրում էլ որ հայտնվի, բարվոք կյանք է ապահովում իր համար, թե տաղանդ ունի, դառնում է աշխարհահռչակ, իսկ իր հայրենիքում... Թույլ է տալիս, որ աղանդները գործեն, քրիստոնեության էությունը չըմբռնած օտարները իրեն քրիստոնեություն քարոզեն, աշխարհակալ թագավորությունների շարաններ ունեցած եւ իր հասարակության մեջ երբեւէ սոցիալական ընդգծված հակասություններ չունեցած հային քաղաքացիության դասեր տան կամ ամենաօրինակելի ընտանիքներին փորձեն տոգորել գենդերայի՞ն մտածողությամբ... Ի՛նչ է, մեզ միշտ Չենով Օհաննե՞ր են պետք, որ թափ տանք մեզ ու մեր գիտակցության վրայից դեն նետենք օտարների փոշին ու մեր անվստահության ժանգը, որ ելնենք **ճգնաժամ** կոչված՝ ոմանց համար երանելի ճահճից եւ մեզ արժանի կյանքով ապրենք: Դրա համար մեզ ո՛չ դրամաշնորհ է պետք, ոչ էլ խորհուրդ. մեզ հերի՛ք է մեր մտքի ու բազկի ուժը: Մեզ միայն վստահությո՛ւնն է պակասում, հավա՛տը սեփական ուժերի հանդեպ...

Չերկարացնենք: Խոսքը որքան պարզ ու հասկանալի խնդրի է վերաբերում, նույնքան էլ կարող է լինել անսպառ: Ընթերցողն ինքը կդնի վերջակետ՝ ինքնավստահ շարժումով ծալելով «**Կրթության**» 2023 թվականի առաջին համարը եւ մտովի ելնելով անվստահության հորից դեպի **վստահ լավատեսություն ու աշխատանք**: Իսկ մենք կշարունակենք *Չենով Օհանի մեր դերը* այնքան, որքան կկամենա **Աստված**:

Գ.Մ.





ՀՀ վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի՛ ժողովուրդ,
Սիրելի՛ հայրենակիցներ,

Ահա անցնում է 2022 թվականը եւ որպեսզի անց 2023 թվականը կթակի մեր դուռը՝ մեզնից յուրաքանչյուրի եւ մեր երկրի կյանքում բացելով մի նոր ժամանակ:

Սրա համար ենք մենք սիրում Նոր տարին. այն տիեզերական եւ հոգեբանական մի շեմ է, որից անդին մենք հույս ունենք թողնել մեր բոլոր ձախողումները, մեր բոլոր սխալներն ու կորուստները եւ տեսնել մեր երազանքները՝ իրականացված:

Ամանորի մասին այս մանկական պատկերացումը մեծ հաշվով մարդուն ուղեկցում է ողջ կյանքում, մինչեւ այն կետը, երբ մարդը հասկանում է, որ երազանքն այլ կերպ՝ կարելի է անվանել ռազմավարություն, իսկ երազանքի կատարումը՝ միջոցառումների ծրագիր, մի անելիք, որ քոնն է բացառապես, եւ այդ երազանքի իրագործման ճանապարհին պիտի հույս դնես ինքդ քեզ վրա, միայն ինքդ քեզ վրա, եւ ուրեմն՝ երազանքդ ու անելիքդ պիտի լինի կոնկրետ, չափազանց կոնկրետ, չափելի եւ իրագործելի:

շարունակությունը՝ էջ 2

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Ամանորի առթիվ

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունը, սերն ու բարեմաղթանքներն ենք բերում ամենքիդ:

Նոր տարվա սեմին ենք մեր սպասումներով ու հույսերով, նաեւ անհանգիստ սրտով ու մտահոգություններով: Անցնող տարին մեր ժողովրդի համար զերծ չեղավ տագնապներից, ունեցանք նոր զոհեր ու կորուստներ: Հայրենիքը տակավին կանգնած է անվտանգային մարտահրավերների առջեւ թշնամական նշանառության տակ են մեր սահմաններն ու խաղաղ բնակավայրերը: Արցախաբնակ Մեր զավակները աննկուն ոգով շարունակում են պայքարել հանուն իրենց անկախ կյանքի իրավունքի պաշտպանության՝ դիմագրավելով բազում նեղությունների՝ նաեւ Լաչինի ճանապարհի արգելափակումով պայմանավորված: Այսպիսի դժվարին իրավիճակում մենք չենք կարողացել մեր ազգային ներուժով լիարժեք միաբանվել հայրենիքը զորացնելու եւ ծանր կացությունից դուրս բերելու համար: Այսօր աշխարհն ալեկոծող աշխարհաքաղաքական սուր դիմակայությունները, որ տեղիք են տվել հոգեւոր, սոցիալական եւ տնտեսական բազմազան խնդիրների, նույնպես իրենց անմիջական ներգործությունն են ունենում մեր տարածաշրջանում ծավալվող զարգացումների վրա:

շարունակությունը՝ էջ 4

ՀՀ վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ

սկիզբը՝ էջ 1

Սա է թերեւս նկատի ունեցել մեր մեծը, Եղիշե Չարենցը՝ *«Երկիր Նաիրի»* վեպը գրելիս, որը քիչ կարդացված եւ քիչ հասկացված ուղերձ է մեզանում, եւ մենք այսօր, թերեւս կրում ենք այն քիչ կարդալու եւ առավել եւս քիչ հասկանալու ծանր հետեւանքները: Ավելի քիչ ընկալված է հայոց մտքի ու հոգու գագաթի՝ Հովհաննես Թումանյանի հանրային գործունեությունը, ինչի մոռացումը ձեւախեղել է ազգային ու պետական շահի մեր պատկերացումը:

2023 թվականն ուզում եմ հայտարարել Չարենցի եւ Թումանյանի ռազմավարական գործերի ընթերցման տարի, որպես պետության կայացման առանցքային ուղերձ ու ռազմավարություն, որպես ինքներս մեզ հետ հաշտվելու դեղատոմս, որպես մեր երազանքները որպես ռազմավարություն ձեւակերպելու եւ ռազմավարությունը որպես երազանք ընկալելու միջոց: Որպես գործիք՝ հասկանալու, թե ինչ է տեղի ունենում մեզ հետ այս օրերում: Իսկ տեղի է ունենում հետեւյալը. մենք պայքարում ենք անկախ, ինքնիշխան, բարեկեցիկ եւ ապահով պետություն ունենալու համար, կոնկրետ՝ պետություն: Մենք բիբլիական ելքի մեջ ենք եւ քայլում ենք անապատի միջով՝ Երկիր Նաիրիից մղվելով դեպի 29 հազար 800 քառակուսի կիլոմետր շատ կոնկրետ ձեւ ու չափ ունեցող Հայաստանի Հանրապետություն: Սա ծանր եւ վտանգավոր, բայց եւ անխուսափելի ճամփորդություն է՝ հանուն փրկության, հանուն հանրապետության, հանուն պետականության:

Ինքնիշխան, ուժեղ եւ ապահով պետություն ունենալու խիստ պրագմատիկ խնդրի լուծման բանաձեւը մեկն է. մենք պիտի կարողանանք փոխել մեր հարաբերությունների որակը մեր տարածաշրջանում, նախեւառաջ՝ մեր տարածաշրջանում, չափազանց բարդ քաղաքական, պատմական եւ սոցիալ-հոգեբանական անելիք, մի միջավայրում, որտեղ մեզ շատ հաճախ սպառնում են, շատ հաճախ խոցում եւ շատ հաճախ սպանում:

Բայց այսօրվա խոսակցությունը մեր սեփական եւ ոչ թե ուրիշների անելիքի մասին է, իսկ անելիքի բանաձեւը մեկն է՝ սիրել հայրենիքն ըստ Չարենցի եւ ըստ Թումանյանի: Սա նշանակում է Հայաստանի Հանրապետությունը սիրել որպես հայրենիք, եւ դա դնել բոլոր գործողությունների, բոլոր երազանքների, բոլոր ռազմավարությունների հիմքում:

Սիրելի՛ ժողովուրդ,

Սիրելի՛ հայրենակիցներ,

2022 թվականը ծանր մարտահրավերների տարի էր: Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակումը ծանր վիճակի մեջ է դրել Լեռնային Ղարաբաղի մեր քույրերին ու եղբայրներին, մեզ բոլորիս: Այս իրավիճակի քաղաքական գնահատականի եւ հնարավոր լուծումների մասին արդեն բազմիցս խոսել եմ: Այս պահին ուզում եմ ամուր գրկել շրջափակման մեջ հայտնված մեր քույրերին ու եղբայրներին եւ նրանց ասել, որ տարածաշրջանում հարաբերությունների որակ փոխելու ասելիքի կարեւոր հասցեատերն են իրենք, եւ սա խորհելու մի բացառիկ ժամ է բոլորիս համար:

Հայաստանի ինքնիշխան տարածքի դեմ 2021 թվականի մայիսից 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ընկած ագրեսիան կրկնակի ցավոտ էր, որովհետեւ անվտանգության ոլորտում մեր դաշնակիցները մեզ թողեցին միայնակ՝ նախընտրելով մնալ պասիվ դիտորդի կարգավիճակում կամ որպես այլընտրանք առաջարկելով ակտիվ դիտորդի կարգավիճակը:

Բայց մենք աշխարհում մենակ չմնացինք, եւ ուզում եմ շնորհակալություն հայտնել այն երկրներին եւ միջազգային կազմակերպություններին, ովքեր անտարբեր չգտնվեցին այս իրավիճակի նկատմամբ եւ մեր երկրի առաջ չունենալով ոչ մի պարտավորություն, գնացին աննախադեպ որոշումների՝ աջակցելու համար մեր տարածաշրջանում անվտանգության ու կայունության հաստատմանը:

Եվ ամենակարեւորը՝ ես այսօր ծնկի եմ իջնում մեր բոլոր նահատակների, նրանց ծնողների եւ ընտանիքների անդամների առաջ, նրանց երեխաների առաջ, եւ իմ ուղերձն առաջին հերթին նվիրված է նրանց, որ Հայաստանի Հանրապետության ապագայի ամենաուժեղ սիմվոլն են, որովհետեւ նրանք զոհվել են, որ Հայաստանն ապրի, նրանք ընկել են, որ Հայաստանը հառնի:

Այս է պատճառը, հենց այս է պատճառը, որ համաշխարհային եւ տարածաշրջանային փոթորիկներին, անվտանգային նորանոր մարտահրավերներին մեր պատասխանն ասիմետրիկ է: Որքան ահագնանում են մարտահրավերները, մենք այնքան կենտրոնանում ենք ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական, քաղաքական, ժողովրդավարական բարեփոխումների, զարգացման օրակարգի վրա, որովհետեւ այդ ճանապարհն է միայն, որ մեծացնելու է մեր այսօրվա դիմակայունությունը եւ ապահովելու վաղվա բարգավաճումը:

Այս իմաստով 2022 թվականը բացառիկ ձեռքբերումների տարի էր: Հայաստանը հայտնվեց տնտեսական ազատության համաշխարհային վարկանիշի 11-րդ հորիզոնականում՝ ներդրումային եւ տնտեսական ազատության առաջատար երկրի միջազգային ճանաչում ստանալով: Սա տեղի ունեցավ այն բանի արդյունքում, որ ի հեճուկս բոլոր դժվարությունների՝ կառավարությունը հավատարիմ է մնացել համակարգային բարեփոխումներ իրականացնելու գործելակերպին:

Որպես արդյունք մենք տարին փակում ենք տնտեսական երկնիշ աճով, որը գլոբալ ճգնաժամային տարում բացառիկ է համաշխարհային մակարդակով եւ ինչպես 2019 թվականին՝ կբարձրացնի Հայաստանի Հանրապետության միջազգային տեսանելիությունը:

Հայաստանում գրանցված աշխատատեղերը հատեցին 700 հազար թիվը. կրկին մի աննախադեպ արդյունք Երրորդ հանրապետության պատմության մեջ: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 2018 թվականի Ժողովրդական, թավշյա, ոչ բռնի հեղափոխության հաղթանակից ի վեր Հայաստանում ստեղծվել է շուրջ 153 հազար նոր աշխատատեղ: Կարեւոր է արձանագրել, որ նախորդ տարվա նոյեմբերի համեմատությամբ, այս տարվա նոյեմբերին մեկ աշխատողի միջին աշխատավարձն աճել է շուրջ 45 հազար դրամով կամ 20 տոկոսով, ինչը նշանակում է, որ մտավախությունները, թե գլոբալ գնաճի պայմաններում Հայաստանը կկանգնի սոցիալական ճգնաժամի առաջ, չեն իրականացել:

Ընդհակառակը՝ Հայաստանի Հանրապետությունում շինարարական բում է, բնակարանաշինարարության բում: Տասնյակ հազարավոր ընտանիքներ նորակառույց շենքերում բնակարան են ձեռք բերում այդ թվում՝ կառավարության աջակցությամբ: 2022 թվականին մենք բնակարան ձեռք բերող ընտանիքներին 36.5 միլիարդ դրամ ենք վերադարձրել եկամտային հարկի գծով, նախորդ տարվա 22.7 միլիարդ դրամին ի հավելում:

Բացի սրանից՝ հազարավոր երիտասարդ ընտանիքներ հիպոթեկային վարկի աջակցության ծրագրերից են օգտվել երեխայի ծննդյան դեպքում. 2022 թվականին այս ծրագրով աջակցության ծավալը հասել է 2.1 միլիարդ դրամի: Ավելի քան 10 հազար երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխա ամսական 50 հազար դրամի աջակցություն է ստանում պետությունից, ավելի քան 10 հազար երեխա:

Պիտի ընդգծեմ 300 դպրոց եւ 500 մանկապարտեզ կառուցելու մեր ծրագիրը, որը մեկնարկել է եւ թափ է ստանում: 2022 թվականի ընթացքում մենք արդեն շահագործման հանձնեցինք հիմնանորոգված, վերակառուցված կամ նորակառույց 24 դպրոց եւ 46 մանկապարտեզ: Հարյուրավոր նոր դպրոցների եւ մանկապարտեզների կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման ծրագրերն ընթացքի մեջ են: Սա անբաժանելի մասն է երկրում տեղի ունեցող ինստիտուցիոնալ բարեփոխումների, որոնք ունեն ոչ միայն կրթական, կառավարչական, անվտանգային, այլեւ խորը պատմական եւ սոցիալ-հոգեբանական ենթատեքստ:

Կարեւոր են այն լայնածավալ բարեփոխումները, որ իրականացնում ենք ոստիկանության համակարգում, որի ամենատեսանելի արդյունքը նոր չափանիշներով Պարեկային ոստիկանության ներդրումն է Հայաստանում:

Առանցքային նշանակություն ունեն այն խորը եւ համապարփակ բարեփոխումները, որոնք մեկնարկել են բանակում: Գրագետ, հայրենասեր, ժամանակակից պահանջներին ու պայմաններին համապատասխանող պրոֆեսիոնալ զինվորի եւ սպայի վրա հիմնված բանակի ձեւավորումն է մեկնարկել, որը պիտի զուգորդվի զինվորական աշխատավարձերի առնվազն կրկնապատկումով, զինվորականների եւ նրանց ընտանիքների սոցիալական երաշխիքների համակարգով, նոր սպառազինությամբ ու տեխնիկայով: Բայց նման բանակը մեզ պատերազմի համար չէ հարկավոր, այլ խաղաղության, մեր ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը պաշտպանելու համար: Մենք աչք չենք դնում ուրիշի հողի վրա եւ ակնկալում ենք, որ ուրիշն էլ մեր հողի վրա աչք չդնի եւ այս բանաձեւով պատրաստ ենք գնալ խաղաղության:

Կարեւոր եմ համարում նաեւ այն մասշտաբային միջոցառումները, որ 2022 թվականին մենք անցկացրեցինք Հայաստանում. բռնցքամարտի Եվրոպայի առաջնություն, Մանկական եվրատեսիլ, Ստարմուս միջազգային փառատոն, Կենսաբանության դպրոցականների համաշխարհային օլիմպիադա: Սրանք միջոցառումներ են, որոնց անցկացումով մենք նորովի ենք երեւում աշխարհին, եւ աշխարհը նորովի է ճանաչում Հայաստանը:

Սիրելի՛ ժողովուրդ,

Հայաստանի Հանրապետության իմ հարազա՛տ քաղաքացիներ,

Այս ամենն իրագործում ենք առաջին հերթին պետական բյուջեի հարկային եկամուտների աննախադեպ աճի շնորհիվ: 2022 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 1 տրիլիոն 925 միլիարդ դրամ, որը 2018 թվականի նույն ցուցանիշից ավելի է 670 միլիարդ դրամով, կամ 53 տոկոսով, կամ մեկուկես միլիարդ դոլարով: Բայց այս ցուցանիշն առաջին հերթին աշխատող, բարիք ստեղծող մարդկանց շնորհիվ է, Հայաստանի Հանրապետության հարկ վճարող տնտեսվարողների, եւ ուզում եմ շնորհակալություն հայտնել նրանց, որ պետական բյուջե վճարվող հարկերը ֆինանսական կորուստ չեն համարում, այլ ներդրում իրենց պետության, իրենց եւ իրենց երեխաների ապագայի մեջ:

Այդ գումարներով է, որ 2022 թվականին նորոգել ենք ավելի քան 500 կիլոմետր ճանապարհ, մեկնարկել ենք ուսուցիչների աշխատավարձերի կրկնապատկման գործընթացը, Երրորդ հանրապետության պատմության մեջ առաջին անգամ արբանյակ ենք արձակել տիեզերք, նոր ավտոբուսներ եւ տրոլեյբուսներ ենք ձեռք բերում մայրաքաղաքի համար, բարձրացրել ենք նվազագույն աշխատավարձը, մեր խոստման համաձայն՝ ավիաընկերություն ենք հիմնել, բարձրացրել ենք գիտնականների աշխատավարձերը, գիտության ֆինանսավորումը 2018 թվականի համեմատ ավելացրել ենք 150 տոկոսով, 2022 թվականի սեպտեմբերից բարձրացրել ենք եւ 2023 թվականի հուլիսից նորից կբարձրացնենք կենսաթոշակները: Ընդ որում, անկանխիկ առեւտրի դեպքում հետվճարի համակարգով այսօրվա դրությամբ կենսաթոշակառուներին եւ նպաստառուներին ենք վերադարձրել շուրջ 527 միլիոն դրամ, եւ ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել այն բանկերին, որոնք կառավարության հետ համահավասար մասնակցում են ծրագրին:

Բյուջետային այդ հավելյալ միջոցների հաշվին է, որ 2022 թվականին պետական պատվերով առողջապահական ծառայության 786 հազար դեպք ենք սպասարկել, որը 2017 թվականի համեմատ կրկնապատիկից ավելին է, 437 հազար դեպքով կամ 125 տոկոսով ավելի:

Իսկ ինչո՞ւ ենք անում այս ամենը: Մի պատճառով, միայն ու միայն մի պատճառով, որովհետեւ սիրում ենք ձեզ, սիրում ենք մեր երկիրը: Սիրում եմ բոլորիդ, սիրում եմ մեր երկիրը, մեր պետությունը, եւ որտեղ սխալվում ու սայթաքում եմ, որտեղ ձախողվում եմ՝ գուցե չափազանցված, գուցե խելամտությունը ստվերող սիրո պատճառով: Բայց սերը, ի վերջո, ավելին է ու ամենազորը, եւ փոթորկված օվկիանոսում հայտնված մեր նավը՝ Հայաստանի Հանրապետությունը, հասցնելու ենք խաղաղ նավահանգիստ:

Եվ ուրեմն՝

Կեցցե՛ ազատությունը,

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը,

Կեցցե՛ն մեր երեխաները, որ ապրելու են ազատ եւ երջանիկ Հայաստանում:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

Այց՝ «Եռաբլուր» զինվորական պանթեոն

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հետ Հանրապետության բարձրագույն ղեկավարության ուղեկցությամբ այցելել է *«Եռաբլուր»* զինվորական պանթեոն:

Վարչապետը ծաղիկներ է խոնարհել սպարապետ Վազգեն Սարգսյանի, Անդրանիկ Օզանյանի շիրիմներին եւ ծաղկեպսակ՝ զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշահամալիրին՝ հարգանքի տուրք մատուցելով նրանց հիշատակին:

* * *

Հունվարի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եպիսկոպոսաց դասի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հետ այցելեց *«Եռաբլուր»* զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայրենիքի անկախության եւ պաշտպանության համար իրենց կյանքն ընծայաբերած հայորդիների հիշատակին:

Վեհափառ Հայրապետը եւ հոգեւորականաց դասն աղոթք բարձրացրեցին առ Աստված նահատակ քաջորդիների հոգիների խաղաղության համար:

Նորին Սրբությունն ու եկեղեցականներն առանձնաբար այցելեցին նաեւ ազգի հերոս զավակների շիրիմներին՝ բերելով իրենց խոնարհումն ու աղոթքը:

Հարգանքի տուրք՝ Հայ մեծերի հիշատակին

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Օղակաձեւ զբոսայգի եւ Ազատության հրապարակ՝ հարգանքի տուրք մատուցել մեծանուն բանաստեղծներ Եղիշե Չարենցի եւ Հովհաննես Թումանյանի հիշատակին ու ծաղիկներ խոնարհել նրանց հուշարձաններին:

Վարչապետ Փաշինյանն այցելել է նաեւ Կոմիտասի անվան պանթեոն՝ իր հարգանքի տուրքը բերելով այնտեղ ամփոփված Հայ մեծերի հիշատակին: Կառավարության ղեկավարը ծաղիկներ է դրել հայ մշակույթի՝ կինոյի եւ թատրոնի, երաժշտության, գրականության, նկարչության, ճարտարապետության, գիտության, սպորտի ոլորտների կարկառուն ներկայացուցիչների, ինչպես նաեւ անվանի հասարակական-քաղաքական գործիչների շիրիմներին:



Մարտական դիրքերում

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ուղեկցությամբ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ այցելել է մարտական դիրքեր:

Նիկոլ Փաշինյանը հանդիպել է մարտական դիրքերում ծառայությունն անցկացնող զինվորներին եւ հրամանատարներին, շրջայց կատարել հենակետերում, ծանոթացել առաջնագծում իրականացված ինժեներական աշխատանքներին, ծառայության անցկացման, ինչպես նաեւ զինվորների կենցաղային պայմաններին:

Նիկոլ Փաշինյանը խրախուսել է ծառայության ընթացքում անձնվիրությամբ եւ խիզախությամբ աչքի ընկած մի խումբ զինվորների: Վարչապետը զինծառայողներին մաղթել է բարի ու անվտանգ ծառայություն: *«Բոլորիդ շնորհակալություն եմ հայտնում ծառայության համար եւ մաղթում բարի ծառայություն: Պետք է հասկանանք, որ հեշտ չի լինելու, մենք այսօր այս դժվարությունը պիտի կրենք, որ վաղվա սերնդի համար հեշտ լինի: Սա էլ մեր ճակատագիրն է եւ պետք է այն պատվով, կամքով տանենք ու մեր խնդիրը լուծենք: Իսկ մեր խնդիրը՝ ուժեղ պետություն ունենալն է, եւ այսօր, այո, մենք այդ հնարավորությունն ունենք: Դա քաղաքական խնդիր է, մենք պետք է այն լուծենք՝ քաղաքական ղեկավարությունը: Զինվորականությունը մեզնից պետք է պահանջի, մենք էլ իրենից»,-* նշել է վարչապետը եւ շնորհավորել բոլորի Ամանորը:

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի շնորհավորական ուղերձը՝ Ամանորի առթիվ

Հայաստանի Հանրապետության հարգելի՛ քաղաքացիներ,

Սիրելի՛ հայրենակիցներ,

Որպեսզի անց մենք կշրջենք 2022 թվականի օրացույցի վերջին էջն ու մուտք կգործենք 2023 թվական:

Անցնող տարին մեր պետականության համար լի էր փորձություններով ու մարտահրավերներով: Մեր պետության ինքնիշխանության ու անկախության համար շարունակական պայքարով ու ձեռքբերումներով, անդառնալի կորուստներով, սահմանային լարվածությամբ ու արցախահայության առջեւ ծառացած անվտանգային սպառնալիքներով:

2023 թվականի նախաշեմին, ես ցանկանում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը մեր ընտանիքներում, մեր տոնական սեղանների շուրջ, մտովի ամփոփելով անցնող տարին, մի ակնթարթ հետհայացք նետի եւ տեսնի, թե ի՝նչ է թողնելու անցնող տարում եւ ի՞նչը պետք է վերցնի իր հետ՝ դեպի գալիք նոր տարիներ:

Ինչ փորձով ու գիտելիքով ենք մենք քայլ անելու դեպի եկող տարի, ինչ հույսերով, կամքով եւ հավատամքով ենք մենք, որպես պետություն, որպես ազգ ու հավաքական հանրություն շարունակելու մեր ուղին՝ դեպի մեր նվիրական երազանքի՝ զարգացող, բարեկեցիկ, անվտանգ ու խաղաղ Հայաստան:

Հենց այսպիսի Հայաստան ունենալու համար, ես հավատում եմ, որ մեր ժողովուրդը կարող է գիտակցել ու գնահատել իր պատմական փորձն ու փորձառությունը, հավատում եմ, որ այդ գիտակցման հանրագումարում մենք կարող ենք գտնել մեր բաղձալի հայրենիքի կերտման ներուժը:

Վստահ եմ նաեւ, որ մեր երկրին բաժին հասած փորձություններից մենք դուրս ենք գալու ավելի ուժեղ, ամուր ու իմաստնացած:

Սիրելի՛ ժողովուրդ,

Գալիք տարում մեր պետության, մեր քաղաքացիների ու պետական այրերի առաջնահերթությունները շարունակում են մնալ մեր երկրի զարգացումն ու հզորացումը:

Մեր սահմանների խաղաղության ու անվտանգության, Արցախի մեր հայրենակիցների արժանապատիվ ապրելու եւ իրենց հազարամյա հայրենիքում արարելու իրավունքների ապահովումը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի հանգուցալուծումը:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Գալիք 2023 թվականին ընդառաջ ցանկանում եմ մաղթել բոլորիս խաղաղություն, անսպառ ընտանեկան երջանկություն, տոկունություն, խաղաղ ու ստեղծագործ աշխատանք՝ ի շահ եւ ի բարօրություն Հայաստանի Հանրապետության:

Շնորհավոր Նոր տարի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Ամանորի առթիվ

սկիզբը՝ էջ 1

Այդուհանդերձ, առ Աստված ապավինությամբ Ամանորի այս երեկո մենք բարեմաղթանքներ ենք ուղղում միմյանց: Բարեմաղթանքներ՝ աշխարհի խաղաղության, մեր հայրենիքի՝ Հայաստանի եւ Արցախի ապահովության ու առաջընթաց կյանքի: Մեր հոգում առավելաբար ակնկալիքներն են մեր կորուստների վերականգնման, հառնած խնդիրների հաղթահարման եւ ազգային մեր կյանքի նորոգության:

Սիրելիներ՛ր, քրիստոնյայի առաքելությունն է ապրել հույսով եւ լինել լավատես՝ համոզումով, որ, ինչպես ասում է առաքյալը, *«հույսը երբեք չի ամաչեցնում»* (Հռ. 5. 5):

Պետությունները կործանվում են, ժողովուրդները անհետանում ոչ թե փորձությունների ծանրությունից, այլ հույսի սպառումից, ապագայի հանդեպ տեսլականի եւ այն կյանքի կոչելու վճռականության բացակայությունից: Մեր ժողովրդի հարագնա երթը եղել է ու պիտի շարունակի մնալ Քրիստոսախարիսխ հավատքի, հույսի ու լավատեսության պատմություն: Այս վստահությամբ ապրենք ու գործենք՝ ամրորեն կառչած մեր ինքնությանը, մեր լինելիության անփոխարինելի գրավականներին՝ հայրենիքին, մեր լեզվին ու մեր հավատքին: Հեռու վանենք մեզանից վհատությունը, ապազգայնությունն ու անտարբերությունը եւ հուսառատությամբ համախմբվենք ազգային ու պետական շահերի շուրջ: Գիտակցենք, որ այս է ուղին մեր վիրավոր հայրենիքի ապաքինման, Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության, հայրենիք-սփյուռք միասնականությամբ լուսավոր գալիքի երաշխավորման եւ ազգիս հարատեւության: Ուստի, առաքելական հորդորով *«արթո՛ւն լինենք եւ սիրո ու հավատի զրահները հագնենք եւ փրկության հույսի սաղավարտը դնենք»* (Ա Թես. 5. 8-9):

Հայրապետիս աղոթքն է, որ Ամենակարողն Աստված խաղաղության մեջ պահի մեր հայրենիքը եւ անփորձանք՝ հայրենյաց պաշտպան մեր զինվորներին: Տիրոջ օրհնությունն ու մխիթարությունն ենք հայցում ծանր կորուստներ կրած ընտանիքներին, ապաքինություն՝ վիրավորներին, շուտափույթ վերադարձ՝ գերեվարված ու անհայտ կորած մեր զավակներին:

Ամանորի սեմին միասնաբար հայցենք Ամենակալից, որ նոր տարում մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս պահպանի խաղաղ ու ապահով, սիրով միասնական ու շնորհի հայրենաշեն ու ազգաշահ իրագործումներ: Թող Տերը մեր կյանքում առատացնի հույսը մեր հայրենիքի ու ազգի ապագայի հանդեպ: Եվ թող Աստծո սերն ու շնորհները այսօր եւ միշտ ուղեկից լինեն մեզ եւ ամենքին:

Օրհնյալ, բարի նոր տարի:

Նախագահն այցելել է զորամաս

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն այցելել է հայաստանյան սահմանային զորամասերից մեկը եւ խրախուսական նվերներ հանձնել հրամանատարական կազմի ներկայացուցիչներին եւ ժամկետային զինծառայողներին: Նախագահին ուղեկցել է Պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը:

Ողջունելով զորամասի անձնակազմին՝ նախագահ Խաչատուրյանը շնորհակալություն է հայտնել բարեխիղճ եւ օրինակելի ծառայության համար եւ շնորհավորել՝ գալիք տոների կապակցությամբ:

Հանրապետության նախագահն իր խոսքում մասնավորապես նշել է. *«Մենք առանձնակի հպարտանում ենք ձեզանով, մենք՝ նկատի ունեմ ե՛ւ իշխանությանը, ե՛ւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներիս, մենք մեր գործով ենք զբաղված, որովհետեւ գիտենք, որ դուք՝ ձեր ուժով, ձեր կամքով, կատարում եք հայրենիքի հանդեպ ստանձնած ձեր պարտավորությունները, որպեսզի մենք կարողանանք մեր քաղաքացիական կյանքում կատարել մեր պարտականությունները: Իսկ բոլորիս նպատակը մեկն է՝ հզորացնել մեր երկիրը, ուժեղացնել մեր անվտանգությունը, որպեսզի որեւիցե մեկի մտքով չանցնի ոտնձգություն թույլ տալ մեր երկրի նկատմամբ: Դժվար տարի է եղել, բարդ տարի է եղել, ցավոք սրտի, կորուստներ ենք ունեցել, անդառնալի կորուստներ, փառք մեր, ձեր զոհված ընկերներին, բայց այդ ամենը մի նպատակ է ունեցել. թշնամուն չթողնել մտնել մեր երկիր»:*

Զորամասից հետո նախագահն այցելել է սահմանային դիրքեր, ծանոթացել վերջիններիս կահավորմանն, ընդհանուր իրավիճակին եւ զրուցել մարտական հերթապահություն իրականացնող անձնակազմի հետ:



Վեհափառը մարտական դիրքերում

Դեկտեմբերի 31-ին **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Հոգեշնորհ **Տեր Մովսես վարդապետ Սարգսյանի,** Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ **Տեր Պարթեւ վարդապետ Բարսեղյանի** եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Հայաստանի Հանրապետության արեւելյան սահմանագծի մարտական դիրքեր: Նորին Սրբությանը դիմավորեց ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր **Առաքել Մարտիկյանը:**

Հայոց Հայրապետը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով հայրենյաց պաշտպաններին, մեծապես արժեւորեց հայ զինվորների եւ հրամանատարների նվիրյալ ու անձնվեր ծառայությունը հայրենիքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անփորձանք եւ ապահով ծառայություն մաղթեց ամենքին՝ նշելով, որ մեր զինվորականները մշտապես Հայոց Հայրապետի եւ հայ եկեղեցականների աղոթքներում են:

Հայրապետական Սուրբ Պատարագ՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով

Հունվարի 6-ին, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության հոգեւորոգ տոնի առիթով, **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Երեւանի *Սուրբ Գրիգոր Լուսավորիչ* մայր եկեղեցում:

Հայրապետական խաչվառազարդ թափորը *«Խորհուրդ խորին»* շարականի հանդիսավոր երգեցողության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսին *Սուրբ Տրդատի* մատուռից առաջնորդեց դեպի խորան: Սուրբ Պատարագին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ **Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը** եւ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան ու Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Գերաշնորհ **Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:**

Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը *«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»* կենարար ավետիսով ողջունեց աշխարհասփյուռ հայությանը եւ տոնի առիթով հղեց իր պատգամը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Նորոգվեցեք ձեր մտքով եւ հոգով ու հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծու»

(Եփ. 4.23-24):

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս,

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի հրաշազարդ այս օրը, համախմբված մեր եկեղեցիներում, օրհնաբանում ենք նորածին Փրկչին՝ միմյանց փոխանցելով փրկավետ ողջույնը. *«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:*

Ավելի քան երկու հազար տարի Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսը հնչում է աշխարհում, արձագանքում մարդկանց հոգիներում որպես անզուգական հրավեր՝ Քրիստոսով նորոգվելու, խաղաղություն հաստատելու, սերն առատացնելու: *«Նորոգվեցեք ձեր մտքով եւ հոգով ու հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծու»,*- պատգամում է առաքյալը՝ ներշնչված Տիրոջ Սուրբ Ծննդյան ավետիսով: Արդարեւ, Աստվածորդին աշխարհ եկավ՝ մեղանչական մարդուն ցույց տալու փրկության ճանապարհը, որը բացվում է Քրիստոսով նորոգվածների համար: Այս ուղիով են ընթանում Փրկչին հավատացող ու փորձությունների առջեւ չընկրկող հոգիները եւ մեղքի ու չարյաց դեմ աներկբա մարտնչողները:

Քրիստոսի Սուրբ Ծննդյան շնորհները պարգեւում են մարդկությանը օրհնյալ կյանք՝ խարսխված աստվածպաշտության, բարության, ճշմարտության ու արդարության վրա, հույսով ու լավատեսությամբ են զինում կորուստներից ու ցավերից վշտահար ու հուսաբեկ հոգիներին, ապաքինում եւ լիացնում բարուց ու սիրուց ամայացած սրտերը եւ զորացնում դժվարություններին դիմակայելու, անգամ անվճռելի թվացող ճգնաժամերն ու պատուհասները հաղթահարելու:

Փրկչի Ծննդյամբ մարդկության կյանքում հնչող նորոգության հրավերի անտեսումը, Աստվածորդու պատվիրաններին հակառակ ընթացքները, սակայն, չարիք ու ավեր են սփռում եւ այսօր էլ պատճառ են դառնում հասարակության մեջ, ընտանիքներում գժտությունների ու անհանդուրժողության, ազգերի ու պետությունների միջեւ հակամարտության ու թշնամանքի: Հիրավի, առաքյալի խոսքի համաձայն, «մեղքի վարձըմահն է, իսկԱստծուշնորհը՝հավիտենական կյանք՝մեր Տեր ՔրիստոսՀիսուսիմիջոցով (Հռ. 6.23):

շարունակությունը՝ էջ 7

Հաջողություններ՝ բարդ եւ պատասխանատու աշխատանքում

ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանն** ընդունել է Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նորանշանակ նախարար **Ժաննա Անդրեասյանին:**

Նախագահ Խաչատուրյանը շնորհավորել է նախարարին նշանակման կապակցությամբ եւ հաջողություններ մաղթել բարդ եւ պատասխանատու աշխատանքում:

«Ցանկանում եմ արգասաբեր աշխատանք եւ հաջողություններ մաղթել Ձեզ՝ շատ կարեւոր եւ պարտավորեցնող պաշտոնում նշանակվելու կապակցությամբ: Կարծում եմ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը գործադիրի ամենակարեւոր գերատեսչություններից մեկն է, որն իր գործունեության բնույթով պայմանավորված ուղղակիորեն առնչվում է մեր հանրության բոլոր շերտերի հետ»,- շեշտել է նախագահ Վահագն Խաչատուրյանը:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել Հանրապետության նախագահին ընդունելության համար եւ ընդգծել, որ բազմոլորտ նախարարության արդյունավետ աշխատանքի առաջնային գրավականը միջգերատեսչական եւ ոլորտային ուղղությունների համագործակցությունն ու ներդաշնակությունն են:

Զրույցի ընթացքում նորանշանակ նախարարը նախագահին է ներկայացրել կրթության ոլորտում իրականացվող ընթացիկ եւ նախատեսվող բարեփոխումների ընդհանուր վիճակն ու մանկավարժների ատեստավորման համակարգի ներդրման ուղղությամբ կատարվող քայլերը:

Հանրապետության նախագահը վստահեցրել է, որ հնարավորությունների սահմաններում մշտապես պատրաստակամ է աջակցել նախարարության կողմից նախաձեռնվող ծրագրերին եւ միջոցառումներին:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի շնորհավորական ուղերձը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ավարտին է մոտենում դժվարություններով եւ մարտահրավերներով, բայց նաեւ նոր նախաձեռնություններով ու գաղափարներով, կյանքի կոչված ծրագրերով լեցուն եւս մեկ տարի, որը մենք դիմավորում ենք մտահոգ, բայց այն համոզմամբ, որ զարգացման անշեղ օրակարգը, հետեւողական աշխատանքը եւ որակական փոփոխությունները կարող են եւ պետք է լինեն առկա մարտահրավերների հաղթահարման ճանապարհը:

Տարին ամփոփում ենք մեծ անհանգստությամբ՝ Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցների համար, որոնք զրկված են արտաքին աշխարհի հետ կապի հնարավորությունից: Բազմաթիվ երեխաներ այսօր զրկված են իրենց հարազատների հետ ամանորյա ընտանեկան տոնը կիսելու հնարավորությունից: Վստահ եմ, որ յուրաքանչյուրիս սա ուղղորդում է հարյուրապատկել ջանքերը եւ անել ավելին՝ մեր երկրի հզորացման համար:

Սիրելի՛ հայրենակիցներ, կրթության եւ գիտության, մշակույթի, արվեստի, մարզաշխարհի ներկայացուցիչներ, աշակերտներ, ուսանողներ, կրթությունը, գիտությունը, մշակույթն ու սպորտն այն ոլորտներն են, որտեղ ավելին անելու մեզանից յուրաքանչյուրի ջանքերը կարող են առանցքային լինել պետության զարգացման համար: Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում արդեն իսկ կատարված աշխատանքներով մենք գտնվում ենք որակական փոփոխությունների այն փուլում, որը շրջադարձային դեր է ունենալու այդ զարգացման համար:

Բոլորս միասնաբար 2023 թվականը պետք է դարձնենք բազմապատկված ջանքերի ու արդյունքների բազմապատկման տարի: Բոլոր երեխաներին ու մեծահասակներին հասանելի որակյալ կրթությունն ու զարգացող գիտությունը, քաղաքացիական արժեհամակարգ ձեւավորող մշակույթը եւ մշտապես նոր բարձունքների խրախուսող մարզաշխարհը կերտում են պետության եւ քաղաքացու դիմագիծը, ամրացնում պետականության հիմքերը: Շարունակական ու հետեւողական աշխատանքները կարդարացնեն մեր ակնկալիքները, կապահովեն առաջընթացը եւ կտան իրենց պտուղները: Այս դժվարին ժամանակաշրջանում մենք վրիպելու եւ ընկրկելու իրավունք չունենք:

Թո՛ղ 2023 թվականը լինի միայն ձեռքբերումների, հաղթանակների ու նվաճումների տարի: Մաղթում եմ խաղաղություն, սեր եւ բարօրություն:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Սպորտին տալիս ենք ռազմավարական նշանակություն

Վարչապետը ներկա է գտնվել 10 լավագույն մարզիկների պարգեւատրման արարողությանը





Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանի** հետ ներկա է գտնվել 2022 թվականի 10 լավագույն մարզիկների պարգեւատրման հանդիսավոր արարողությանը:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ Վարչապետի աշխատակազմի ղեկավար **Արայիկ Հարությունյանը,** Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** պաշտոնատար այլ անձինք, հայկական սպորտի ոլորտի բազմաթիվ ներկայացուցիչներ:

Վարչապետ Փաշինյանը հանդես է եկել ելույթով, որում նշել է.

«Հայաստանի Հանրապետության մեծարգո՛ նախագահ,

Կառավարության հարգելի՛ ներկայացուցիչներ,

Գործադիր իշխանության, օրենսդիր իշխանության հարգելի՛ ներկայացուցիչներ,

Հարգելի՛ չեմպիոններ, մարզիչներ,

Հարգելի՛ մարզիկներ,

Հարգելի՛ ներկաներ,

Նախ պիտի շնորհակալություն հայտնեմ բոլորիդ՝ այդ առաքելությունն իրականացնելու համար, որովհետեւ սպորտը մեզ համար, ինչպես ասել եմ, պետական առաքելություն է: Սպորտը մեր պետության, մեր հանրության գործունեության, արտաքին, ներքին քաղաքականության, ծրագրերի եւ ռազմավարության շարունակությունն է: Մենք ռազմավարական նշանակություն ենք տալիս սպորտին, որովհետեւ սպորտը պետականության եւ դրոշի մասին է: Այնտեղ, որտեղ մենք չենք կարողացել բավարար բարձրության պահել մեր դրոշը, այնտեղ, որտեղ մեր ձեռքից ընկել է մեր դրոշը, դուք այդ դրոշը բարձրացրել եք: Սա ամենակարեւոր առաքելությունն է:

Ես կրկնակի ուրախ եմ, որ մեր մի քանի տարի առաջ ունեցած խոսակցությունը կամ մի քանի տարի առաջ սկսած եւ տարբեր փուլերով անցած խոսակցությունը հասել է այս կետին, որ արծագանքում ենք իրար: Դուք արծագանքում եք մեր քայլերին, մենք արծագանքում ենք ձեր քայլերին, եւ դրա արդյունքում ստանում ենք համապետական մի արդյունք: Դա մի արդյունք է, որը չի ճանաչում ո՛չ ընդդիմություն, ո՛չ իշխանություն, ո՛չ հարուստ, ո՛չ սոցիալապես ոչ այնքան ապահով, որովհետեւ, երբ դուք հաղթում եք, նույնիսկ ամենամոլի ընդդիմադիրները պատրաստ են գրկախառնվել եւ իրար համբուրել, որովհետեւ հպարտ են զգում իրենց եւ երջանիկ: Սա մեր բոլորի ձեռքբերումն է:

Նախարարի տեղակալն արդեն ընդգծեց, ճիշտն ասած մենք մի քանի անգամ այդ թեմաներով խոսել ենք, բայց նույնիսկ ես տպավորված եմ: Ես ուզում եմ մեր խոսակցության մի ուրիշ բան հիշեցնել, երբ հերթական հանդիպումներից մեկի արդյունքներով նախարարի տեղակալն ինձ ասաց, որ բյուջեով նախատեսված միջոցներն արդեն ավարտվում են, երբ մենք պիտի պարգեւատրենք մրցանակակիրներին: Ես ասացի՝ մեդալները ձեզնից, փողը մեզնից: Ես ուրախ եմ, որ մենք այդ խոստումը ոչ միայն կատարել ենք, այլեւ գերակատարել ենք: Հիմա էլի պաշտոնապես ասում եմ՝ մենք ամեն ինչ անելու ենք հանուն ձեր հաղթանակի, որովհետեւ ձեր հաղթանակը Հայաստանի Հանրապետության հաղթանակն է:

Ուզում եմ եւս մի խոստում պաշտոնապես կրկնել: Բոլոր օլիմպիական չեմպիոնների անվամբ մարզադպրոցներ ենք կառուցելու: Իրենք հենց չեմպիոն դարձան, դեռ չվերադարձած, օդանավի մեջ՝ արդեն կառավարությունում գործընթացը սկսվելու է: Էլ չեմ ասում մնացած բաների մասին:

Ուզում եմ հիշեցնել նաեւ մի պայմանավորվածություն, որը ձեռք բերեցինք, կարծես թե 2021 թվականին, որ մենք Հայաստանի օլիմպիական կոմիտեի հետ համատեղ գործողությունների ծրագիր եւ անելիքների պլան պիտի մշակենք: Կարծում եմ, որ 2022 թվականի արդյունքներով ժամանակն է համադրել մեր արածները, թե փոխադարձաբար որքան միջոց ենք ներդրել, ջանք ենք ներդրել եւ արդեն պլանավորենք առաջիկա անելիքը:

Շատ ուրախությամբ պիտի արձանագրեմ նաեւ մի հանգամանք՝ ես տեսնում եմ, որ մարզական համայնքում համերաշխության որոշակի մթնոլորտ կա, եւ սա շատ կարեւոր է: Ես ձեզ խնդրում եմ՝ դա անպայման պահեք: Անպայման պահեք եւ պահպանեք: Բոլոր վեճերը թողեք մեզ, մենք ամեն ինչ կանենք ձեր վեճերը լուծելու համար, մենք ամեն ինչ կանենք, որպեսզի դուք նպատակից չշեղվեք:

Պարզ է, որ մեր պետության հնարավորություններն անսահմանափակ չեն, բայց մեր նպատակն այն է՝ ամեն ինչ անել, որ մարզիկը զբաղվի սպորտով եւ ստիպված չլինի ամենատարբեր եւ լրացուցիչ սպորտի հետ կապ չունեցող գործունեությամբ զբաղվել իր մարզական գործունեության արդյունքում կրած վնասները փոխհատուցելու համար:

Իհարկե, այն ինչ ասում եմ, իդեալական չէ, բայց հույս ունեմ՝ դուք տեսնում եք, որ մեր խոսքը, մեր ցանկությունը, մեր ջանքն անկեղծ է: Անում ենք այնքան, ինչքան հնարավոր է: Իրար հետ, քայլ-պատասխան, քայլ-պատասխան՝ դրանով մեր երկրի հնարավորություններն են աճելու, հեղինակությունն է մեծանալու:

Մենք, իհարկե, մեր ռազմավարական նպատակին պիտի հասնենք. մինչեւ 2050 թվականը՝ առնվազն 25 օլիմպիական ոսկե մեդալ, դա նշանակում է, որ 25 կամ կրկնակի չեմպիոններ լինեն. 25 մարզադպրոց՝ ժամանակակից բոլոր չափանիշներին համապատասխանող, նորագույն գույքով, նորագույն տեխնիկայով: Ուրեմն՝ մինչեւ 2050 թվականն առնվազն 25 օլիմպիական ոսկե մեդալ եւ ֆուտբոլի Եվրոպայի կամ Աշխարհի առաջնության մրցանակ: Սա է մեր ռազմավարական նպատակը, եւ մենք իրար հետ շարժվում ենք դեպի այդ նպատակը:

Կրկին շնորհակալ եմ բոլորիդ: Սիրում եմ բոլորիդ, հպարտանում եմ բոլորովդ: Դուք մեր երեսը պարզ արեցիք:

Շնորհակալ եմ դրա համար»:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն, ամփոփելով մարզական տարին, ներկայացրել է տարվա ընթացքում հայ մարզիկների նշանակալի նվաճումները, ինչպես նաեւ անդրադարձել հաջորդ տարվա ընթացքում սպորտի զարգացմանը միտված պետական միջոցառումներին, մարզադպրոցների կառուցման եւ վերակառուցման ծրագրերին: *«19 մարզաձեւերից Աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում նվաճեցինք 307 մեդալ, վերջինը՝ այսօր Հայկ Մարտիրոսյանը նվաճեց կայծակնային շախմատի Աշխարհի առաջնությունում՝ արժանանալով բրոնզե մեդալի: Այսպիսով, ստացանք 104 ոսկե, 70 արծաթե եւ 133 բրոնզե մեդալ: Համեմատության համար նշենք, որ անցած տարի նվաճած մեդալների քանակը 199 է, իսկ մեր լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին՝ 222 մեդալ»*,-ասել է Կարեն Գիլոյանը:

10 լավագույն մարզիկներին պարգեւները հանձնել է նախագահ Վահագն Խաչատուրյանը:

2022 թվականին Հանրապետության 10 լավագույն մարզիկներ են ճանաչվել՝ Արթուր Ալեքսանյանը (ըմբշամարտ, աշխարհի առաջնության չեմպիոն), Մալխաս Ամոյանը (ըմբշամարտ, Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության 3-րդ տեղ), Հովհաննես Բաչկովը (բռնցքամարտ, Եվրոպայի չեմպիոն), Սամվել Գասպարյանը (ծանրամարտ, աշխարհի առաջնության 3-րդ տեղ, Եվրոպայի առաջնության փոխչեմպիոն), Արթուր Դավթյանը (սպորտային մարմնամարզություն, աշխարհի չեմպիոն, Եվրոպայի փոխչեմպիոն), Վարազդատ Լալայանը (ծանրամարտ, աշխարհի առաջնություն 3-րդ տեղ, Եվրոպայի փոխչեմպիոն), Արսեն Հարությունյանը (ըմբշամարտ, աշխարհի առաջնության 3-րդ տեղ, Եվրոպայի առաջնության չեմպիոն), Անի Հովսեփյանը (բռնցքամարտ, Եվրոպայի չեմպիոն), Հարություն Մերդինյանը (սպորտային մարմնամարզություն, աշխարհի առաջնության 3-րդ տեղ, Եվրոպայի առաջնության չեմպիոն) եւ Լիլիթ Մկրտչյանը (հրաձգություն, Եվրոպայի առաջնության չեմպիոն, աշխարհի առաջնության 3-րդ տեղ): Հանրապետության նախագահը Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Արթուր Դավթյանին պարգեւատրել է Առաջին աստիճանի մեդալով:

Հայրապետական Սուրբ Պատարագ Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով

սկիզբը՝ էջ 5

Սիրելիներ, Աստվածորդու հրաշափառ Սուրբ Ծնունդը առանձնակի քաջալերությամբ է համակում, հավատքով գոտեպնդում Քրիստոսասեր մեր ժողովրդին, որ վերջին տարիներին ենթարկվեց նոր փորձությունների: Արցախյան պատերազմի եւ ամիսներ առաջ Հայաստանի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների արհավիրքներում մենք վերստին կրեցինք ծանր կորուստների ցավն ու տառապանքը: Մեր զավակները հերոսաբար զոհվեցին հանուն հայրենիքի, հազարավորները հաշմանդամ դարձան: Մեր տասնյակ զավակներ գերության մեջ են, տակավին կան անհայտ կորածներ: Տեւական ժամանակ արգելափակված է Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհը, ինչը հանգեցրել է հումանիտար աղետի: Այս ծանր իրավիճակում մեր դեմ ծառացած հիմնախնդիրները հաղթահարելու համար մենք կարիքն ունենքճշմարիտ նորոգության, սրտով, հոգով, մտքով մաքրվելու, Քրիստոսով վերափոխվելու եւ միախորհուրդ ու միակամ դառնալու ազգի եւ հայրենիքի առջեւ մեր հանձնառությունների մեջ: Այսպիսի նորոգությամբ է, որ կարող կլինենքհայրենական մեր կյանքից բացառել ամենայնչարն ու անարդարը, վախի, բռնության, ատելության ու հարմարվողականության կործանարար դրսեւորումներըեւ հայրենիքի բարվոք ապագայի տեսլականով համախմբել ազգային ողջ ներուժը, ամրագրել միմյանց հանդեպ հարգանքն ու սերը, վստահության հաստատուն հիմքերի վրա խարսխել Հայաստան-սփյուռք գործակցությունը: Պատմական փորձառությամբ գիտենք, որ նեղություններից հաղթանակած ենք դուրս եկել, երբ եղել ենք միաբանված ընդհանրական նպատակների շուրջ: Քրիստոսով նորոգված, Քրիստոսով միասնական, Աստծո շավիղներով քայլելով, մենք, ինչպես առաքյալն է ասում, մեզ պաշարած փորձություններից այսօր էլ հաղթական պիտի դուրս գանք (հմմտ. Հռ. 8.37):

Սիրելի՛ զավակներ Մեր, Աստծո օգնականությունը խնդրելով՝ ամուր մնանք առ Փրկիչ մեր Տերը հավատքի մեջ եւ աներկմիտ սրտով պահպանենք մեզանում Սուրբ Ծննդյան հուսաբեր տոնի հոգեւոր ապրումը: Զորանանք հայրենիքի սիրով եւ ամեն կարելի հնարավորությամբ սատարենք Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում դժվարություններ կրող մեր քույրերին ու եղբայրներին: Գիտակցենք, որ պատասխանատու ենք հայրենիքի ու սերունդների առջեւ եւ վտանգի չենթարկենք մեր անկախ պետականությունը: Մեր բարի գործերը դարձնենք հիմերը մեր վերելքի ու հաղթության եւ միասնաբար կերտենք մեր հայրենիքի ու ժողովրդի ապահով, լուսավոր գալիքը:

Սուրբ Ծննդյան Պատարագի այս սրբազան պահին Հայրապետական Մեր խոսքն ենք հղում խրոխտ ու անվեհեր Արցախի հավատավոր Մեր զավակներին: Սիրելի արցախցիներ, մեր ժողովրդի մտածումներն ու հայացքները այս օրերին առավելաբար ձեզ են ուղղված: Դուք, որ դժվարությունների առջեւ երբեք չեք ընկրկել ու չեք նահանջել, այսօր էլ տոկունությամբ շարունակում եք հերոսաբար պայքարել հանուն ձեր ազատ ու անկախ կյանքի, հանուն պատմական արդարության վերականգնման: Ձեր քաջ նախնյաց փառավոր օրինակով հաստատուն ու աննկուն մնացեք հայրենի հողում ապրելու եւ արարելու վճռականության մեջ: Մեր Սուրբ Եկեղեցին աշխարհասփյուռ իր թեմերով ձեզ հետ է, աջակից ու զորակից ձեզ: Ձեր հիմնարար իրավունքների պաշտպանության արդար պահանջը հաղթանակելու է համայն հայության ջանքերով եւ միջազգային հանրության սատարումով:Հավատում ենք, որԱստծո ողորմածությամբ մեր ժողովուրդը իրեն պատած խավարի մեջ պիտի լույս ծագեցնի եւ դիմագրավի իր կյանքում ծառացած լրջագույն մարտահրավերներին:

Այս զգացումներով ու մտածումներով, Սուրբ Ծննդյան ավետիսով Մեր ողջույնն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տեր Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տեր Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին՝ մաղթելով Աստծո զորակցությունը տերունավանդ ծառայության մեջ: Ի Քրիստոս եղբայրական սիրով ողջունում ենք քույր Եկեղեցիների Պետերին՝ հայցելով մանկացյալ Փրկչի օրհնությունը իրենց աստվածապատվեր առաքելությանը եւ հավատավոր հոտին: Հայրապետական Մեր սերն ու բարեմաղթանքներն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ համայն հավատավոր Մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս:

Սուրբ Ծննդյան այս շնորհազարդ առավոտ սրտագին աղոթքով խնդրում ենք Ամենակալ Տիրոջը, որ բեթղեհեմյան աստղալույսը հարատեւ շողարձակի մեր ազգային կյանքի երկնակամարում, որպեսզի մենք, Փրկչին ապավինած, հաստատենք մեր ընթացքը սիրո, համերաշխության ու միասնականության շավիղներում: Թող Սուրբ Ծննդյան կենարար խորհրդով խաղաղություն լինի աշխարհին ու համայն մարդկությանը:Թող հավատքով պայծառացած՝ աշխարհասփյուռ ազգս հայոց զորացնի իր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը, իրականություն դարձնի իր նվիրական իղձերը եւ փառավորի մարդեղացյալ Փրկչին՝ գոհությամբ ձայնելով.

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս

Հավարտ Սուրբ Պատարագի՝ կատարվեց Ջրօրհնեք, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ Սրբալույս Մյուռոնով օրհնեց ջուրը: Խաչի այս տարվա կնքահայրն է ժնեւահայ բարերար Հակոբ Ավագյանը:

Ջրօրհնեքի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը վերստին իր օրհնությունն ու Սուրբ Ծննդյան փրկարար ավետիսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Մեղեդի Ծննդյան



Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ,
Ինչպես երկու փայլակնաձեւ արեգակներ,
Շողն է նման լուսացնցուղ այգաբացի:
Թափվում էին այտերից՝ վառ
Դափնեվարդի ու նռնենու ծաղկաթերթեր.
Գեղաշիտակ իրանից սիրտն էր կարկաչում
Հուզավարար կենսատու սեր:
Կամար կապած թեւերը գիրգ՝
Երգում էր նա ախորժալուր ու գեղգեղուն,
Ելեւէջներն հյուսում իրար.
Շարժվում հանդարտ ու ճեմում էր թիկնեթեկին:
Բերանն երկթերթ, շրթունքներից վարդն էր կաթում.
Լեզվի տավիղն էր քաղցրերգում հուզումնահորդ.
Շողում էին նույն կենսավառ
Սիրով չքնաղ ու գինեթույր
Ծամերն իրենց գիսակներով խոպոպավոր:
Այդ վարսերը համերամ զա՜րդ, համորեն զա՜րդ,
Ոլորք առած եռահյուսակ՝
Բոլորվել են այտերի շուրջ.
Լուսափայլ է ծոցը, կարմիր վարդով լցված,
Դաստակներն են մանուշակի ծիրանի փունջ:
Բուրում էր նա կնդրուկի պես
Աստվածային հրով լցված մի բուրվառի.
Ձայնն էր մեղուշ, քաղցրանվագ:
Զարդարված էր պատմուճանով գեղեցկատես,
Որ բեհեզի կապույտ, որդան ու ծիրանի
Գույներով էր ոսկեշողում.
Գոտին կամար, արծաթափայլ,
Ոսկետտուն ու նրբակերտ՝
Պաճուճված էր ակնեղենով շափյուղայի:
Երբ շարժվում էր մարգարտափայլ գեղեցկությամբ,
Քայլերի հետ շողն էր կաթում իր ոտերից:
Քեզ պսակող թագավորին
Ու նորածին այն փրկչին փա՜ռք
Հավիտյանս հավիտենից. ամեն:

գրաբարից թարգմանությունը՝
Վազգեն ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Գրականագիտական

Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպը

սկիզբը՝ «Կրթություն», թիվ 51, 07.12.2022 թ.

Հայրենիք վերադառնալուց առաջ նա հոգեբանական զգայացունց պահեր է ապրում՝ կապված Թամարի հետ: Սիրած աղջկան հետը պատերազմ տանել չէր կարող՝ վտանգավոր է, թողնելը ապահովություն է, բայց եւ թանձր անորոշություն: Այդպես այդ սերը մնում է կես ճանապարհին, որովհետեւ խոստումներով լի հրաժեշտը այլ բան չէ, քան վերջնական բաժանում: Դավիթ Բեկը գիշերով գրում է Ստեփանոսի նամակի պատասխանը, նախապատրաստում իր վերադարձը, բայց հոգին լաց է լինում. Դժվար է ոչ միայն ի՛ր համար, այլեւ աղջկա, որն ասում է. *«Ա՛խ, մի՛ գնա… եթե քեզ մի օր չտեսնեմ, ես կմեռնեմ…»* (էջ 215): Սերն է, որ, մի քանի օր չտեսնելուց հետո, աղջկան գիշերով տանում է Բեկի տուն:

Սեր եւ հայրենիք՝ սա գաղափարապաշտության հիմնական հանգույցն է, որ Սմբատ Շահազիզի պոեզիայում ստացավ պարզ ձեւակերպում. *«Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր... // Ես սիրո՛ւմ եմ հայրենիք»* (*«Ոսկե շղթա. Հայ քնարերգության ընտրանի»,* 2019, էջ 152): Ուրեմն, նախ՝ հայրենիք, որ նշանակում է անձնազոհություն: Իսկ գաղափարապաշտ հերոսի առաջին հատկանիշը նվիրվածությունն է հայրենիքին եւ անձնազոհությունը: Անձնազահություն այն աստիճանի, որ *«Սամվել»* վեպում Ռշտունյաց օրիորդ Աշխենի սիրուն արժանանալու համար Սամվելը նախ պիտի հայրենիքին նվիրվեր, այդ ճանապարհին ելներ հոր դեմ եւ նոր միայն արժանանար օրիորդի բարեհաճությանը: Սա՛ էր պահանջը, որին ենթակա է նաեւ Դավիթ Բեկը: Թամարը հարցնում է. *«…ի՞նչ ես սիրում դու, որ ես էլ նույնը սիրեի»,* եւ Բեկը պատասխանում է. *«Ես սիրում եմ իմ հայրենիքը եւ իմ ազգը» (էջ 221):* Այս ընդհանուր սերն էլ նրանց միավորում է, բայց եւ բաժանում՝ ամեն ոք ի՛ր ճանապարհով: Թամարը օրհնում է Դավիթի ճանապարհը, ցանկանում նրա հետ միասին գնալ, բայց, վտանգները աչքի առաջ ունենալով, Դավիթը համոզում է մնալ եւ անգամ պատճառաբանություն է բերում. *«Իբրեւ ամուսին, քեզ ինձ հետ տանել չեմ կարող, որովհետեւ դու դեռ իմ նշանածն ես»* (էջ 225):

Վեպի **երրորդ գիրքը** ավելի ծավալուն է, քան նախորդ երկու գրքերը միասին վերցրած: Սկիզբը. *«1722 թվին Դավիթ Բեկը թողեց Վրաստանը եւ վերադարձավ իր հայրենիք»* (էջ 228): Վեպը կարող էր նաեւ այպես ու այստեղից սկսվել, իսկ լրացուցիչ բացատրությունները կներառվեին շարադրանքի մեջ. սա տարբերակ է, հեղինակի նախընտրած ձեւին զուգահեռ:

Այս գլխում **Ռաֆֆին հանդես է գալիս որպես ռազմական հմուտ ստրատեգ:** Պատմական սուղ վկայությունները նրա երեւակայության քարտեզում դառնում են իրական տարածություն ու միջավայր, մանավանդ, հիշենք, որ ինքը ոտքով շրջագայել էր այդ վայրերում եւ շատ լավ գիտեր տեղանքը, բնակավայրերը, ճանապարհները: **Ռաֆֆին՝ որպես հեղինակ, այս գլխում կարծես ինքը լինի Դավիթ Բեկը,** որ հաղթական կռիվներ է մղում եւ հայրենիք ազատագրում: **Այդ խրոխտ ոգին է, որ առաջ է տարել վեպի շարադրանքը:**

Մեկ անգամ չէ, որ Ռաֆֆին իր վեպերի բովանդակային շրջանակներում հեռանում է բուն վիպական գործողություններից եւ պատմական տվյալներ ներկայացնում իրավիճակի մասին: Վիպասան գեղարվեստագետն այստեղ դառնում է պատմաբան գիտնական: Այդպես է նաեւ *«Սամվել»* պատմավեպում՝ նկատի ունենալով *«Փակագծի մեջ»* վերնագրված հատվածը: Գրողը ազգ էր կրթում ու լուսավորում, հայրենասեր գործիչներ էր դաստիարակում եւ այդ նպատակով վիպասանությունից դուրս նաեւ նրանց չիմացածն էր նրանց հաղորդում:

Այստեղ անդրադարձ կա XVIII դարասկզբի Պարսկաստանին: *«Պարսկաստանը քայքայման վիճակի մեջ էր»* (էջ 228),- պատմական այս տեղեկությունը շարադրանքը գցում է հունի մեջ: Վիպական տարածությունն ընդլայնվում է մինչեւ Աֆղանստան, Պետրոս Մեծի ժամանակների Ռուսաստան, հասնում թուրք-պարսկական պատերազմներին, երբ իրար մեջ կիսում էին Հայաստանը: Շահերն ու փաշաները, արքաներն ու փոխարքաները, խաներն ու մելիքները հաջորդում են իրար: Առանձին պատկերներում Սպահանի պաշարումն է, քաղաքին մերձակա, այսինքն՝ Սպահանի արվարձան Նոր Ջուղայի հայերի վիճակը, սովի տեսարաններ են, երբ եղբայրն ուտում է քրոջ ստինքը, հայ-ռուս արքունական հարաբերություններն են, հնդկահայերի կապերը ռուս ինքնակալների հետ, որոնց բանակներն արդեն Դերբենդում էին ու Բաքվում, ինչը եւ նոր ծրագրեր էր բորբոքում Ղարաբաղի մելիքների մտքում: Իսկ Ռուսաստանը մտադիր էր տիրելու ոչ միայն Կովկասին ու Անդրկովկասին, այլեւ՝ Ատրպատականին: Այստեղ Մինաս վարդապետն ու Իսրայել Օրին են իրենց ռուսական առաքելությամբ, Պետրոս Դի Սարգիս Գիլանենցի 1722-1723 թթ. օրագրությունն է, նաեւ հայ-վրացական հարաբերություններն ու մահմեդականություն ընդունած վրացիներն են: Դավիթ Բեկը դեռ Վրաստանում գիտեր, իսկ հիմա արդեն համոզված է, որ *«…հայերի եւ վրացիների մեջ միություն կազմել անհնարին է: Վրացիները ավելի բարվոք էին համարում իրանց կամ ռուսների գիրկը գցել, կամ պարսից ծանր լծի տակ մնալ, կամ օսմանցիներին հրավիրել, բայց ոչ երբեք միանալ հայերի հետ եւ ազատ լինել»* (էջ 245):

Խոսում են. *«-Մի մարդով ոչինչ չի դառնա: -Այդ մի մարդը կդառնա հարյուր, իսկ հարյուրը՝ հազարներ»* (էջ 249): Եվ ահա, այդ **Մեկ մարդը՝** Դավիթ Բեկը, քառասուն քաջերի իր զինավառ խմբով ոտքի է ելել եւ դիվանագիտորեն պատրաստ, Մեծ Սյունիքի եւ Փոքր Սյունիքի (Ղարաբաղ կամ Արցախ) գավառներում տիրող իրավիճակին ծանոթ, մելիքների քաղաքական կողմնորոշումներին տեղյակ սկսում է իր ռազմական գործողությունները: Նրա կենտրոնը Տաթեւն էր: Նրանց աջակցում էին նաեւ հոգեւոր հայրերը՝ Տաթեւի վանահայր, Սյունյաց աշխարհի հոգեւոր առաջնորդ՝ միտրոպոլիտ, սրբազան Ներսես արքեպիսկոպոսը, Մովսես եպիսկոպոսը, հայր Խորենը, որոնք ե՛ւ զենք են տեղափոխում, ե՛ւ ազատագրական ոգի հրահրում ստրկության դատապարտված ժողովրդի մեջ եւ ուժ ու կորով ներշնչում:

Առանձին դրվագներով ներկայացվում է մելիքությունների, գավառական կենտրոնների, առանձին բնակավայրերի ազատագրումը: Առաջին հաջողությունը Ույ-Թեփեի կարաչոռլուների ցեղին փախուստի մատնելն էր եւ ունեցվածքը գրավելը: Իրար են հաջորդում Շինուհայրը, որը ապստամբների կողմն է անցնում առանց կռվի, իսկ տեղի հայերը միանում են Բեկի խմբին: Հաջորդը պարսիկների ջվանշիր ցեղն էր, որ 16.000 աշխարհազորով գալիս է նրա դեմ եւ երկու օր ու գիշեր տեւած կռիվներից հետո ջախջախվում: Կոտորվում են նաեւ ջվանշիրներին օգնության եկած պարսկական Կուրթլար ավանի բնակիչները:

Բեկի սարսափը տարածվում է, իսկ դրան բնականորեն նպաստում են ռազմական հաջողությունները եւ պատերազմական իրավիճակով պայմանավորված խստությունները: Սարսափը ռազմական գործողություններից առաջ է ընկնում եւ նախապատրաստում հաջողությունը: Ռաֆֆին հարկ է համարում սրբազանի կողմից հատուկ քննարկել եւ հաստատել պատերազմական գործի այսպիսի խիստ դրվածքը:

Ազատագրական մեծ շարժմանը մասնակցում են հանրության բոլոր դասերը՝ հոգեւորականները, շինականները, կանայք...

Հոգեւորականների մասնակցությունը հրաշալի է Վարդանանց տոնի դրվագում, Ներսես արքեպիսկոպոսը պատարագ է մատուցում, քարոզ կարդում, աղոթք անում եւ ոգեկոչում ազգի հերոս սուրբ Վարդանին: Եկեղեցին իր ունեցվածքից թանկարժեք սկիհներ ու անոթներ է նվիրում ձեւավորվող բանակին, այսինքն՝ ազատագրական գործին մասնակցում է թե՛ ոգեպես, թե՛ նյութապես, թե՛ գաղափարապես: Նաեւ այսպես է շարունակվում հաղթական պատերազմը:

Ընդհանուր ոգեւորության խանդավառությամբ գործողության մեջ են մտնում նաեւ հայոց աշխարհի փափկասուն տիկնայք՝ իրենց ոսկեղեն զարդերի նվիրատվությամբ, անձնական քաջությամբ, անելանելի վիճակներից ելք գտնելու հնարամտությամբ: Եվ, ընդհանրապես, Ռաֆֆին շատ ուշադիր է կանանց կերպարների հարցում: Ըստ էության *«Դավիթ Բեկ»*-ը տղամարդկանց վեպ է, բայց եւ անպակաս են կանայք, որոնց հետ ոչ միայն սերն է թեւածում, այլեւ խելքն ու հերոսությունը: Կանանց կերպարները թե՛ այս վեպում եւ թե՛ ընդհանրապես Ռաֆֆու վիպագրության մեջ առանձին խոսակցության նյութ են:

Վարդանանց տոնի արարողության ժամանակ բերում են գերի ընկած մելիք Դավիթ Ուրացողին, որն ամեն ինչ անում էր Դավիթ Բեկի գործունեությունը խափանելու համար: Նրան աջակից էր պարսիկ կնոջից ծնված որդին՝ Շահ-Կուլի անունով եւ Ֆաթալի խանի զորաջոկատը: Ե՛վ հորը, ե՛ւ որդուն դավաճանի անպատիվ մահ է սպասվում: Ուրացողից թալանված մի կին երկաթե գամը դնում է Շահ-Կուլիի գլխին եւ օթակով այնպես զարկում, որ մեխը մտնում է գլխի մեջ:

Զարմանք է հարուցում Դավիթ Ուրացողը, ով բարոյապես այնքան էր ընկել, որ պարսից լուծը գերադասում էր անկախ հայ պետականությունից: Ժողովուրդը որքան էլ նման լինի փափուկ մոմի, բայց ճիշտ ղեկավարության դեպքում կարող է դառնալ ահռելի ուժ եւ հիմա այդ ուժի առջեւ ժողովրդին փչացնող ու բարոյալքող Ուրացողն է: Որպես մահապարտ՝ նրան թարս նստեցնում են մի սեւ ավանակ վրա, սանձի փոխարեն ձեռքը տալիս ավանակի պոչը եւ քշում հրապարակ, ուր դահիճը իր գործն է անում եւ կտրված գլուխը ցցում նիզակի ծայրին ու ժողովրդի ցնծության ներքո օդ հանում: Ուրացողին գլխատելուց հետո Սատանի կամուրջից Որոտան գետն է թափում նաեւ նրա ամբողջ պիղծ ազգուտակը: Այո՛ դավաճանները պիտի պատժվեն, թշնամին պետք է ոչնչացվի, սա է պատերազմի օրենքը: Հակառակ դեպքում տեղերը փոխվում են:

Ռաֆֆին մեկ անգամ չէ, որ խիստ խոսքեր է ասում թշնամիների ճնշումից խեղճության ու ստրկության դատապարտված, ազատության մասին չմտածող եւ ազգային ինքնությունը կորցրած իր ժողովրդի մասին: Այստեղ սրբազանի հետ զրուցելիս խոսքը տալիս է Բայինդուր իշխանին. *«Ստված է վկա, այդ ժողովուրդը մորթելու է արժանի»:* Ազգին համեմատում է անբարոյական կնոջ հետ եւ շարունակում. *«Մեր ազգը մի այսպիսի անբարոյական կին է. նա մի մեծ պոռնիկ է, նրա երեսին ամոթի եւ պատվի մի կաթիլ անգամ չէ մնացել: Մոտ չորս հազար տարի նա պոռնկություն է անում, բայց տակավին չկշտացավ, չհագեցավ օտարներից: Ասորեստանցին դարերով գործ դրեց նրա վրա իր անբարոյական կրքերը: Հազարավոր տարիներ անցկացրեց նա՝ երբեմն հույնի, երբեմն պարսիկի, երբեմն հռոմեացու գիրկն ընկնելով: Մինչեւ անգամ անապատի արաբը իր հաստ շուրթերով շոշափեց նրա երեսը: Մինչեւ անգամ Թուրանի տափակաքիթ, դեղնակաշի մոնղոլը դարերով պառկեց նրա հետ»* (էջ 288): Անարգված կնոջ հետ այս համեմատությունից հետո նա դեռ շարունակում է՝ միեւնույնն է, ես սիրում եմ այդ կնոջը. *«Սիրում եմ ատելով, սիրում եմ զզվելով... բայց սիրում եմ»* (էջ 288):

Սիրուց, բայց նաեւ խաբված սիրուց բխած այդ ատելությունն էլ հանուն նույն սիրո էր, եւ պատահական չէ, որ հայրենիքի փրկության առաջին գրավականը, անձնազոհ անհատի հետ մեկտեղ, Ռաֆֆին համարում է ազգային սերը: Ինչո՞ւ է Ռաֆֆին հայոց պարտությունների պատմությունը նմանեցնում անառակ կնոջ ընկած վարքին՝ մի օր սրա հետ, մի օր նրա: Այդպե՛ս, որովհետեւ հաղթանակի հուշարձաններն էլ են կերտվում կնոջ կերպարով՝ որպես մայր հայրենիք: Կնոջ արժանապատվությունը արդեն իսկ հաղթող երկրի խորհրդանշան է. նշանակում է՝ տղամարդի իր պատիվը գետնով չի տվել:

Բնակավայրերի ազատագրման խանդավառ տարերքը շարունակվում է: Ծավալով ամենից շատ էջեր են հատկացված Զեվու բերդի գրավմանը (Զեյվա, Գեղի, գտնվում է Կապանում, չպետք է շփոթել Զեյվա ամրոցի հետ, որը Գյուլիստանում է): Այս գլխում առավելագույն նրբությամբ է փայլատակում Ռաֆֆու ռազմագիտական, ռազմավարական ու մարտավարական տարերքը: Զեվուի առումը՝ մահացու հարված էր թուրքերին, որովհետեւ Հայաստանում ոչ միայն պարսիկներն էին, այլեւ թուրքերը:

Ինչպես բերդի պաշարումը, այնպես եւ գրավումը երեւակայության հնարամիտ դրսեւորումների մի շատ հետաքրքրական ցանց են հյուսում: Հյուսնի, սափրիչի, սափրիչի աշակերտ վիրաբույժի երեւույթով Դավիթ Բեկի մարդիկ ծպտյալ թափանցում են բերդ: *«Սափրիչը հայիծորցի Տեր Ավետիքն էր, Դավիթ Բեկի ամենաքաջ զորապետներից մեկը»* (էջ 316), նրա աշակերտը Խորեն հայր սուրբն էր, հյուսնը՝ Ստեփանոս Շահումյանը: Ճանապարհին ոչնչացնում են մելիք Ֆրանգյուլից Ֆաթալի խանին նամակ տանող սուրհանդակին, տեղեկանում նամակի բովանդակությանը, որով դավաճանը օգնություն էր խնդրում Դավիթ բեկի դեմ: Թափանցում են բերդ, որտեղ կար նաեւ հայկական թաղամաս՝ մի հիսուն տուն: Բերդի տեր Ասլամազ-Կուլի խանը հայերին թույլ չի տալիս հեռանալ, պահում է որպես պատանդ:

Այստեղ է նաեւ հալիձորցի Մելիք Փարսադանի որդի, չափազանց հնարագետ ու ճարպիկ Բալի զորավարը: Մի հայ ընտանիքում Խորենի եւ տանտիկնոջ՝ Սառայի սիրո վերհուշն է՝ դարձյալ ենթարկված հայրենիքին ծառայելու գաղափարին: Բերդի հայությանը առաջնորդում է Տեր Ավետիքը եւ տանում դեպի թուրքի թաղ: Իր քաջագործություններով հաղթանակն ապահովում է նաեւ սպասուհի Փարիշանը, նա ով հրդեհում է բերդը եւ ձեռք բերում թշնամու զինապահեստի բանալիները: Թուրքերը *«Յա Ալի»* են բղավում ու նետվում մարտի, հայերը՝ *«Կեցցե՛ Դավիթ Բեկը»:*

շարունակությունը՝ էջ 9

Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպը

սկիզբը՝ էջ 8

Բերդում հրդեհներ, զինապահեստի գրավում, այլեւայլ հնարամտություններ... Հայերը կարողանում են թշնամուն սեղմել թե՛ ներսից եւ թե դրսից ու ոչնչացնել: Թշնամին նաեւ ունեզրկվում է՝ ոչ միայն ռազմավարն է, այլեւ սարերում արածող հոտերն են, նախիրներն ու երամակները... Մաքրվում են նաեւ թուրքմենների վաչկատուն ցեղերի մնացորդները: Ռաֆֆին արդարացիորեն խիստ է թշնամու հանդեպ, որովհետեւ հոգեպես եւ նյութապես նրանք կեղեքել էին ժողովրդին, ոչ միայն սպանել հայրենասիրական ոգին, այլեւ սնել, աճեցրել, բազմացրել դավաճանների: Այս հարցը հերթական անգամ քննարկման են ենթարկում սրբազանն ու Ասլամազ-Կուլի խանի վեզիրը եւ գթության ու անգթության հարցը հանգեցնում կրոնների բարոյախոսության տարբերություններին: Թեեւ հիմա հայ քրիստենյաները գիտակցել են, որ գութը այդ գազանների համար չէ, բայց Բեկը, անսալով վեզիրի աղաչանքներին, ասում է. *«Ես կհրամայեմ դադարեցնել կոտորածը, բայց բերդը պետք է քանդվի»* (էջ 449):

Նորից փայլատակում են հարեմի գեղեցկուհիները. այստեղ ե՛ւ սիրո հարցեր են, ե՛ւ խորամանկություններ են ու խարդավանքներ: Ասլամազ-Կուլի խանին բացատրում են փոխադարձ սիրո հմայքն ընդդեմ բազմակնության, որ նշանակում է *«Կինը բողոքում էր բռնության դեմ»* (էջ 389): Խանը մի կերպ փախչում է Բեկի ազատարարներից, բայց ուշքումիտքը կանանոցի կողմն է: Գիտակցում է, որ կանանոցը իր արժանապատվությունն է: Գերի չընկնելու համար խանը իջնում է իր իմացած գաղտնի ծակուռներից մեկի մեջ եւ իր հետ մեկտեղ պայթեցնում կանանոցը:

Դեռ կար Մելիք Ֆրանգյուլը, որ Երիցվանիկ ավանում էր: Ասում էին նաեւ Արծվանիկի մելիք Ֆրանգյուլ: Դավիթ Բեկի համբավը նրան հանգիստ չէր տալիս: Ֆաթայի խանից Բարգուշատի մելիքությունը ստանալուց հետո նրա հետ կապը ամուր պահելու համար աղջկան կնության է տալիս նրա եղբորը՝ Աղասի խանին: Դրանից հետո Ֆաթալի խանի մոտ Մելիք Ֆրանգյուլը ստանում է վեզիրի պաշտոն:

Ֆաթալի խանի, նրա հետ մեկտեղ նաեւ մելիք Ֆրանգյուլի դեմ գնում է զորավար Թորոսը. վերջինիս հետ էին Ստեփանոս Շահումյանը եւ Բալի զորապետը: Ռաֆֆին դավաճան մելիքի մասին նույնիսկ այսպիսի խոսքեր է գրում. *«Մելիքը բնավորությամբ բարի մարդ էր, բայց սաստիկ փառասեր: <...>: Բայց իբրեւ հայ, նա ցանկանում էր Հայաստանի բարին, ցանկանում էր, որ այդ երկիրը ազատ լինի, բախտավոր լինի, ցանկանում էր, որ նա ունենար իր հայ իշխողը, բայց այդ իշխողը լինի ոչ այլ ոք, բայց՝ միայն ինքը»* (էջ 455): Նա ուրացել էր հավատը, բայց ոչ մահմեդական էր, ոչ քրիստոնյա, նրա իրական հավատը մերկ շահն էր ու փառքը: Ներկայացնում է մելիքի ընտանիքը. կինը մահացավ այն տարի, երբ նա

մահմեդականություն ընդունեց, հետո չի ամուսնանում, ունի երկու տղա՝ Հախին, որ հորից առանձին ընտանիքով ապրում է գյուղում եւ Մկրտումը, որն ապրում է հոր հետ: Երկու որդիներն էլ պահել են քրիստոնեական հավատը:

Հետաքրքրական է մի նրբություն՝ խաները կնասեր են, իսկ մելիքների կյանքում, այն էլ մահմեդականություն ընդունած մելիքների, որ բազմակնության հնարավորություն է, կին ասածը եղած չեղած նույն բանն է: Այստեղից՝ մելիքների արժանապատվության պակասը, որովհետեւ կնոջ ներկայությունը նաեւ կնոջ պատիվը պահելու արվեստ է:

Դավիթ Բեկի ուժն ու ռազմական հաջողությունները տեսնելով՝ մելիք Ֆրանգյուլը անգամ մտածում է անցնել նրա կողմը: Տատանումների ու տվայտանքների մեջ վիճակ է գցում, որը դուրս է գալիս հօգուտ Ֆաթալի խանի: Իր հերոսի մեջ դրական հատկանիշներ նշելը ահա նրա այս տատանումների համար էր, ըստ որի՝ նա կարող էր նաեւ Դավիթ Բեկի զինակիցը լինել եւ այդ դեպքում ոչ մի պարսիկ կամ թուրք վտանգ չէր ներկայացնի: Բայց ահա վիճակը դուրս է գալիս Ֆաթալի խանի օգտին:

Վերջինս այդ ժամանակ իր կանանոցով ապրում էր ամառանոցում, ինչը Արծվանիկից մեկ ժամվա ճանապարհի վրա էր: Մելիք Ֆրանգյուլն այցելում է նրան եւ նախագծում առաջիկա իրադարձությունների պլանը: Այստեղ է, որ նա իր խորամանկության հնարամտությամբ գերազանցում է ինքը իրեն: Բավական չէ, որ տերտերով, ավետարանով հավատարմության թուղթ է ուղարկում Թորոս Իշխանին, այլեւ ինքն է ներկայանում իր ախոյանին, երդումներ տալիս, հայտնում իր *«հպատակության հավաստիքը»* (482), խոստանում իր 2.000-անոց զորախմբով օգնել նրան ընդդեմ Ֆաթալի խանի: Իր կեղծիքը թե՛ նամակում, թե՛ անձնական հանդիպման ժամանակ եւ թե Ֆաթալի խանի հետ ունեցած հարաբերություններով ոչ միայն երդումներով, այլեւ ցուցադրականորեն այնպես է կազմակերպում, որպեսզի հավատան: Հավատ ներշնչելու համար կազմակերպում է անգամ խանի զորքերի ձեւական հարձակումը իր ամրոցի վրա, որտեղից ինքը, իբր, մի կերպ է ճողոպրում: Այս ամենը փոխում են Թորոս իշխանի վերաբերմունքը մելիք Ֆրանգյուլի հանդեպ եւ նրան թույլ է տալիս, որ գործով ապացուցի իր անկեղծ նվիրվածությունը: Թեեւ յուրայիններից մյուսները ամենեւին չեն հավատում մելիքի փոխակերպմանը, բայց իշխան Թորոսի մեջ միամիտ մարդկայինը անհարկի գլուխ է բարձրացնում: Մինչդեռ՝ դավաճանը մնում է դավաճան. կռվի թունդ պահին, երբ նախնական պայմանավորվածության համաձայն պարսից զորքը նահանջում է, իսկ հայերը հետապնդում են նրանց, ահա այդ իրավիճակում հայերն ընկնում շրջափակման մեջ? պարսից բանակը ետ է դառնում եւ անցնում հակահարձակման, մյուս գլխից հայերի դեմ հարձակման է անցնում մելիք Ֆրանգյուլը:

Նորից երեւում է Ֆաթալի խանը կռվին նախապատրաստվելու իր սովորույթներով. ոսկի ու արծաթ է շաղ տալիս ամբոխի առաջ՝ նրան հակառակորդի դեմ գրգռելու մոլեռանդությամբ, դերվիշների հետ գուշակություններ է անում: Պատերազմը եղվարդ գյուղի դաշտում էր, որին ասում են Շուշանների դաշտ: Ռաֆֆին ոչ թե նկարագրում է պատերազմը, այլ պատմում է դրա մասին, ասում՝ թե ինչ եղավ: Հրամանատար Թորոս իշխանը սպանվում է, Բալի զորավարը վիրավորվում է պարանոցից, վիրավորվում է նաեւ Ֆաթալի խանը, սպանվում է նրա կրտսեր եղբայր Աղասի խանը: Այդ սարսափելի կոտորածից հայ զորապետերից փրկվում է միայն մելիք Նուբարը՝ իր հազար որոս հարյուր զինվորների հետ:

Հայոց զորքը այս ճակատում պարտվում է:

Դեպքերի 17 տարվա վաղեմությամբ հայտնվում է Սյուրին, աղջիկը՝ Ֆաթիման արդեն չափահաս էր, իսկ նա շարունակում է իմացած լուրերով գաղտնի օգնել հայրենակիցներին: Ստեփանոս Շահումյանն ու Սյուրին հանդիպում են: Ֆաթիման հարցնում է մորը. *«-Այդ ո՞վ է, մայրիկ: -Քո հայրը, զավակս,- պատասխանում է մայրը»* (էջ 513):

Պատերազմից հետո մելիք Ֆրանգյուլին սպանում է դարանակալ Ստեփանոս Շահումյանը ու սպանված տեղում ճանապարհի վրա էլ թաղում, հեռու հասարակաց հանգստարանից *«...ՆՆջեցյալների հանգիստը չպղծելու համար»* (էջ 450):

Վեպը ունի նաեւ ***«Վերջաբան»***, որտեղ Ռաֆֆին ամփոփում է ե՛ւ դիպաշարը, ե՛ւ պատմական դեպքերի հաջորդական ընթացքը: Թորոս իշխանը այդ ճակատում թեեւ պարտվեց, բայց Դավիթ Բեկն ընդհանուր ազատագրական պայքարում հաղթեց: Պարսիկներին քշեցին, բայց եկան օսմանցիները: Դավիթ Բեկը Տեր Ավետիսի ու Մխիթար սպարապետի հետ մեկտեղ մի քանի նոր հաղթանակներ է տանում, հալածում ու դուրս շպրտում օսմանցիներին եւ վերականգնում ժողովրդի հավատը սեփական ուժերի հանդեպ: Հիմա արդեն պարսիկները հայերի կողմն էին՝ ընդդեմ թուրքերի: Ուղտերի քարավանով տաջիկների գլուխները նվեր ստանալուց հետո պարսից շահը Դավիթ Բեկի հետ դաշինք է կնքում, հրամանագրով նրան է շնորհում Կապանի ամբողջ գավառը որպես սեփականություն եւ կարգում գլխավոր իշխան Սյունյաց եւ Գողթան նահանգների *«...եւ հրաման տվեց իր անունով դրամ կտրել: Դավիթը այժմ հասած էր իր բաղձանքին, նա իր ազատ հայրենիքի տերը եւ իշխանն էր: Այդ եղավ 1727 թվին: <...>: Բայց նա իսպառ իր նպատակները իրագործել չկարողացավ, որովհետեւ հիվանդացավ՝ վախճանեցավ իր տան մեջ 1728 թվին, վեց տարի միայն վարելով իր իշխանությունը: Դավթից ժառանգ չմնաց, շատ հավանական է, որ նա ամուսնացած եւս չլիներ: Նրա մահից հետո զորականքը միաբանվելով՝ ընտրեցին Դավթի տեղ Մխիթար սպարապետին»* (էջ 518-519):

Մխիթար սպարապետի նստավայրը Խնձորեսկն էր: Թուքերից նա մաքրում է հայրենի երկիրը, բայց *«Մխիթարի իշխանությունը երկար չտեւեց, որովհետեւ 1730 թվին նույն հայերից հրացանազարկ լինելով մեռավ՝ երկու տարի միայն իշխելով»* (էջ 520): Ակնարկ կա նաեւ տեր Ավետիքի մասին, իսկ *«Դավթի գործակից մյուս քաջերի մասին լռում է պատմությունը...»* (էջ 520):

Գ.

Նշելով զորավար Դավիթ Բեկի հերոսական գործունեության 300-ամյակը, հիշելով նրա մասին եղած բոլոր պատմական վկայությունները, պետք է արժանին մատուցենք նաեւ **Մեծ Հայ Ռաֆֆուն,** ով գեղարվեստորեն կերտեց եւ ժողովրդի համար սիրելի դարձրեց նրա կերպարը: Սերունդներ են կրթվել այդ վեպով, եւ հերոսներ են ծնվել այդ վեպից: Շատ վտանգներով լեցուն մեր գոյապայքարի ճանապարհին **գրականության սպարապետ Ռաֆֆու հրամանատարությամբ քաջարի հերոսներով կռվող մի անպարտ զորաբանակ էլ եղել է այս վեպը:** Փառք Ռաֆֆուն եւ համազարկային եռագույն հրավառություն նրա պատվին:

«Դավիթ բեկ» վեպի դասերը կենդանի են նաեւ այսօր, երբ հայ ժողովուրդը դժվարությամբ կերտում է իր ազատ ու անկախ պետականությունը: Ժամանակները փոխվել են, բայց անկախ ու ազատ ապրելու խնդիրները մնում են, որոնք թե՛ ներքին են, թե՛ արտաքին: Ներքինը վերաբերում է համազգային միաբանությանը, արտաքինը՝ թուրք-ադրբեջանական սադրանքներին, որոնց թիկունքում նաեւ մեծ երկրների շահերն են: Ի՞նչ անել՝ ծնե՞լ մի նոր Դավիթ Բեկ, դա ի՛ր հերթին, անձնազոհ, նվիրված հայը միշտ էլ պետք է ժողովրդին եւ նրանցից շատերը հերոսացան արցախյան առաջին պատերազմում: Բայց այսօր միայնակ հերոսը, որքան էլ հարգի է, այնուամենայնիվ հարցերը լուծվում են աշխարհաքաղաքական այլ ընդգրկումներով:

Անկանխակալ մտայնությամբ պարզ նայենք իրականությանը՝ ռուս-ուկրաինական պատերազմն է մեր աչքի առաջ. ամբողջ արեւմտյան համագործակցությունը պաշտպանում է Ուկրաինային: Իսկ մեր՝ հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակ քանի՞ երկիր ձայնը բարձրացրեց հօգուտ հայության եւ նյութական ու ռազմական օգնություն ցուցաբերեց: Սա մնում է որպես հռետորական հարց...

Միջանկյալ ասեմ՝ այդ մենք էինք՝ մի բուռ մտավորականներ ու գիտնականներ, որ մեր երկու-երեք ամսվա համեստ աշխատավարձը հավաքեցինք եւ հանուն ազգային բանակի ուղարկեցինք համահայկական հիմնադրամի հասցեով ու չգիտենք իր նպատակին ծառայե՞ց արդյոք այդ գումարը, թե՞...

«Դավիթ բեկը» մի վեպ է, ինչը պիտի դասագիրք լինի բոլոր ռազմական ուսումնարաններում. այն պարտավոր են կարդալ եւ ուսումնասիրել շարքային զինվորից մինչեւ գեներալ, նախարար ու շտաբի պետ: Այստեղ ոչ միայն ոգին է, այլեւ ռազմական արվեստը, նաեւ երկրագիտությունն ու տեղագրությունը:

Եվ, ի վերջո, ո՞վ է այսօրվա հայը՝ Դավիթ Բեկի՞ զարմից է նա թե մելիք Ուրացողի: Ամենեւին նա չէ հայը, ով քոչն առած դասալիքի պես փախչում է հայրենիքից, մեկ սերունդ հետո նրանք կորած են ազգության համար: Բացառիկ դեպքերը օրինաչափություն չեն: Նա՛ է հայը, ով ապրում է իր հայրենիքում, այստեղ ծնում, սնում ու բազմացնում իր զավակներին եւ նրանց փոխանցում ազգային հիշողություն, որ մայրենի լեզուն է, հայոց պատմությունը եւ հայ արվեստն ու մշակույթը: Այսօր էլ հեշտ չէ Հայաստանի վիճակը: Արտաքին թշնամին նույնն է, արտաքին վտանգները նույնն են, ներքին անմիաբանությունը խորանում է եւ ազգային վիճակը չի կայունանում: Անկախությունը շատ մեծ բան է, բայց եթե անկախությունը չի ամրապնդվում պետության անվտանգությամբ, ժողովրդի միաբանությամբ, տնտեսության զարգացմամբ, բնակչության բարեկեցությամբ, ազգային արժեքների գնահատությամբ, արվեստի ու մշակույթի բարձրացմամբ, ուրեմն ինչ որ բան տեղում չէ, ինչ որ բան այնպես չէ:

շարունակությունը՝ էջ 10

Սոցիալական

Փոխհատուցում՝ Արցախյան պատերազմի մասնակիցներին

Կառավարությունը ՀՀ պետական բյուջեի միջոցներից կփոխհատուցի 2020 թ. Արցախյան պատերազմի մասնակիցների հերթական խմբի ուսման վարձը

Կառավարության նիստում գործադիրը որոշում է կայացրել 2022 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների վերաբաշխման միջոցով հատկացնել 93 մլն 974.6 հազար դրամ՝ շահառուների հերթական խմբի (364 սովորողի) մեկ ուսումնական տարվա մեկ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցման նպատակով:

Փոխատուցումը կտրամադրվի բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն ներկայացրած? Պաշտպանության նախարարության համապատասխան տեղեկատվության հիման վրա:

Հիշեցնենք, որ 2021 թվականին ուսման վարձի փոխհատուցում է տրամադրվել բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 7318 ուսանողի, որոնց ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը կազմել է 1 մլրդ 595 մլն 930.7 հազար դրամ:

Հավաքագրման աշխատանքները շարունակվել են նաեւ 2022 թվականի ընթացքում եւ միջոցառման շահառու են համարվել այն սովորողները, որոնք զորացրվել են 2021-2022 թթ. ձմեռային զորացրմամբ: Այդ նպատակով ուսման վարձի փոխհատուցում է ստացել 1239 ուսանող, որոնց ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը կազմել է 285 մլն 23 հազար դրամ:

2022 թվականի հուլիսի 31-ից մինչեւ նոյեմբերի 16-ն ընկած ժամակահատվածում նախարարությունում հավաքագրվել են բուհերի կողմից նախարարություն ներկայացրած շահառուները՝ 364 անձ, որոնց ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը կազմում է 93 մլն 974.6 հազար դրամ:

2020 թվականին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեկնած եւ մարտական գործողություններին մասնակցած սովորողների վերջին խումբը ենթակա էր զորացրման 2022 թվականի ամառային զորացրման ժամանակ, որոնք էլ ստանալու են նշված փոխհատուցումը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպը

սկիզբը՝ էջ 9

Պետական այն կառույցը, որն այսօր կոչվում է Հայաստանի Հանրապետություն, որը մեր Հայրենիքն է՝ բազմաթիվ սերունդների երազանքի արտահայտություն է: Ազատ հայրենիք ունենալու մասին քանի՞ պատմագիտական, գրական-գեղարվեստական գրքեր են գրվել... Այդ երազանքը իրականացվել է մասնակի, այդ երազանքը լիարժեք չէ, մենք ունենք բազմաթիվ խնդիրներ, եւ, առաջին հերթին, Արցախի հարցը, որտեղից ամեն օր մտահոգիչ լուրեր են լսվում...

Այո՛ մեր ներկա հայրենիքը բազմաթիվ սերունդների երազանքի ու ջանքի արտահայտություն է, որը ունի չլուծված շատ խնդիրներ՝ ե՛ւ այնպիսիները, որոնք մեր ձեռքին են, ե՛ւ այնպիսիները, որոնք մեզ պարտադրվում են: Բայց այնպես չլինի, որ այդ խնդիրները արդյունավետ լուծելու փոխարեն եղածն էլ կորցնենք, ինչպես ասում են? ունքը շինելու փոխարեն աչքը հանենք: Իսկ այդ վտանգը կա: Արցախի վերջին պատերազմում կրած պարտությունը կոտրեց մեր մեջքը: Ի վերջո, հիմա էլ՝ 21-րդ դարում, հարցերը պատերազմի դաշտում են վճռվում: Մնացածը՝ հաղթանակի արդյունքը թե պարտության հետեւանքը սրի զորությամբ է չափվում: Մենք անընդհատ աչքերս ճանապարհին ենք հառել՝ օգնություն ստանալու հույսով, բայց սպասումները չեն արդարացել: Ու մնացել ենք այպես պարտության ամոթն ու պարտության բազմատեսակ հետեւանքները շալակած, հակառակորդին դիմագրավելու փոխարեն սկսել ենք մեր մեջ դավաճաններ որոնել եւ թշնամու արշինով ինքներս մեզ չափել:

Բավակա՛ն է: Պատմությունն ու Դավիթ Բեկը մեզ սթափության են կոչում: Բոլոր մանր անձնական, նեղ կուսակցական շահերը թողնենք մի կողմ եւ ուժ գտնենք միաբանվելու ու համատեղ ելք որոնելու: Ինչպես ժամանակ առաջ, հիմա էլ հայրենիքը մեզ է կանչում: Անսահման Չարենցը կասեր.

Հասել ենք մենք արդեն այն սահմանին, որից
Սկսվում է մի նոր ու դժվարին վերելք:-
Սին տենչերի փոշին մեր խոհերից քերենք
Եվ ճանապարհ ընկնենք, մե՛ծ ճանապարհ նորից:-

(ԵԺ, IV, 1968, էջ 37):

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Արցախ

«Ընդ եղեգան փող..»

Ամիսներ առաջ Ստեփանակերտի իր անունը կրող հ. 2 հիմնական դպրոցի բակում հանդիսավորությամբ տեղադրվեց Արցախի հերոս, *«Մարտական խաչ»* առաջին աստիճանի ասպետ **Աշոտ Ղուլյանի** (***«Բեկոր»***), կիսանդրին:

Դպրոցը 1993-ից է կրում լեգենդար հրամանատարի անունը եւ, անշուշտ, նրա ոգեղեն ներկայությունն ու դրոշմն ունի կրթօջախի ողջ գործունեությունը:

Իսկ բակը դադարեց սովորական լինելուց, այն դարձավ սրբատեղի: ...Ու հիմա, կորուստներից խոնարհված մեր գլուխները պետք է վեր բարձրացնենք,որ կարողանանք տեսնել նրան...

Դպրոց մտնողին առաջինը դիմավորող Փառքի սրահում են ընթանում բոլոր միջոցառումները, ուր միշտ ներկա են հրամանատարն ու իր զինվորները: Գյամարտի նահատակների հիշատակին անվանակոչված շատ դասարաններ ունի կրթօջախը: Ասել է թե՝ ամեն ինչ նրանց հայացքի ներքո է...

Դպրոցի տնօրեն **Լաուրա Մարտիրոսյանի** խոսքով՝ հերոսի կիսանդրին ունենալու գաղափարը ծագել է մի քանի տարի առաջ եւ համապատասխան առաջարկությամբ դիմել է ԱՀ ԱԺ: Որոշակի կոնկրետ քայլեր արվել են, բայց խանգարել է պատերազմը:

44-օրյա պատերազմն իր արհավիրքներով առավել տեսանելի դարձրեց մեր գոյամարտի բոլոր հերոսներին ու հերոսապատման բոլոր արարները:

Գոյամարտի հերոսներն երեւացին ամենից առաջ իրենց հզոր որակներով, ցուցանելու,որ բոլորից վեհագույնը հայրենիքի հանդեպ սերն է, որդու, զավակի սերը՝ արյամբ փոխանցված, եւ որի դեմ անզոր է ամեն արհավիրք: Եվ, որ մենք բոլորս ենք այդ արյան կրողները եւ հանձնվելու իրավունք չունենք...

Աշոտ Ղուլյանը երանելիներից է ոչ միայն մեր նորագույն պատմության մեջ ունեցած իր լուսավոր հետագծով, այլեւ մարդկային իր նկարագրով: Ցավոք, անձամբ չեմ հանդիպել, չեմ հասցրել զրուցել նրա հետ, բայց տարիների ընթացքում զինակից ընկերներից շատ հետաքրքիր տեղեկություններ եմ քաղել:

Հատկանշական է, որ ժամանակի վայիվերումներում նրա կերպարը սրբագրումների չի ենթարկվել, ինչպես շատ ու շատ ճանաչված դեմքերի պարագայում: Ավելին, ժամանակը վեր է հանել շատ մոռացված մանրամասներ,որոնք առավել վառ են արտահայտում նրա զինվորական տաղանդն ու մարդկային ազնվագույն նկարագիրը:

Խառնվածքով համեստ էր, համեստ, ինչպես իր կենսագրականը: Ծնվել է Բաքվում, 1959-ին:

Ընտանիքը 1975-ին թվականին էր տեղափոխվել Արցախ: Ղուլյանները արմատներով Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղից են: Դպրոցից հետո ծառայել է խորհրդային բանակում:

Առաջ ընկնելով՝ ասենք, որ 1985-ին է ամուսնացել: Աշոտ եւ **Նելլի** Ղուլյաններն ունեցան երեք որդի՝ **Արթուր, Հմայակ** եւ **Բեկորկրտսեր:** Երրորդ զավակը ծնվել է հոր զոհվելուց մի քանի ամիս անց:

Ազատագրական շարժմանը զինվորագրվել էր մինչ առաջին լուրջ բախումները: Մի խումբ ընկերների հետ ինքնաշեն զենքեր էր պատրաստում: Տիրապետում էր մի շարք արհեստների, ինչն էլ դյուրացնում էր զինագործության դժվարին մտահղացումներն իրականացնել: Ժամանակակիցների վկայությամբ բազմարհեստ մարդը *«ոսկի ձեռքեր»* ուներ:

Մարտական անունը՝ *«Բեկոր»,* հենց ստացել է ինքնաշեն զենքերի փորձարկումներից ստացած բեկորների շնորհիվ:

90-ականների պատերազմի տարիներին Ստեփանակերտի այսօր իր անունը կրող դպրոցում էր տեղակայվել իր ղեկավարած ինքնապաշտպանական ջոկատը, որի շուրջ էլ ձեւավորվել ԱՀ ՊԲ առաջին վաշտը՝ կրկին իր հրամանատարությամբ: Եվ այդ զորամասը ողջ պատերազմի ընթացքում պետք էր փառքով պսակեր իր անունը: Այնպես, ինչպես վայել էր առաջինին:

Նրա զինվորների համար պատիվ էր նման հրամանատարի կողքին լինել եւ իրենց իսկ խոստովանությամբ՝ սեփական էության արմատական փոփոխությունները տեսնել: Զինվորի կամքն ամրանում էր հրամանատարի ամենատես եւ հոգածու վերաբերմունքով:

Նորեկներին խնայում էր հայրաբար, հորդորում նախ լավ տիրապետել զենքին, սովորել ավագներից ու նոր մեկնել մարտադաշտ՝ ողջ մնալու եւ պայքարը շարունակելու վճռականությամբ:

Նրա համոզմամբ,եթե զինվորից մինչ նախարար իրեն գործը բոլորանվեր կատարեն,ապա մեր բոլոր քայլերը հաջողությամբ կպսակվեն:Հայրենիքի զինվորի իմաստությամբ է նշել. *«..Դարաբաղը կարող է կործանվել միայն քաղաքական խաղերի պատճառով,քաղաքականությունն ամենասարսափելի գիշատիչն է»:*

Իսկ առաջին վաշտի մարտական էջն ամբողջացել է բազում փորձություններով ու հաղթանակներով: Այն ձգվում էր Շահումյանի շրջանից եւ անցնում Արցախով մեկ՝ իբրեւ փառքն ու պատիվը հայ զինվորի:

...1992-ին Շուշիի ազատագրման ռազմական գործողության ժամանակ առաջին վաշտը Բեկորի գլխավորությամբ առաջինն է մտել հայոց բերդաքաղաք: Այդ օրերի քրոնիկոնը շատ թանկ փաստագրություն ունի. մայիսի 8-ի վաղ առավոտյան Աշոտ Ղուլյանը հեռակապով հայտնում է Արկադի Տեր-Թադեւոսյանին, որ ինքն արդեն նստած է Շուշիի բերդի պատին ու մի քանի րոպե անց քաղաքում է լինելու...

Լեգենդար հրամանատարը զոհվել է 1992-ի օգոստոսի 24-ին՝ Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի ազատագրման համար մղված մարտում:

Պետական պարգեւները եղել են հետմահու, որոնք եկել են լրացնելու սիրված հերոսի՝ ողջության օրոք ձեւավորված դիմանկարը, մեկ անգամ եւս հաստատելով այն հրաշքը, որ օրհասի պահին հենց նման կերպարներով է հայտնվում փրկության հույսը:

Իմ ավագ գործընկերներից մեկը նման երեւույթն անվանել է ֆենոմեն՝ անբացատելիի երանգներով:

Իսկապես, ինչպես մեր շարժման շատ ու շատ հրամանատարներ, Աշոտ Ղուլյանն էլ զինվորական կրթություն չի ստացել, խորհրդային բանակի շարքային զինվորին որտեղից այդքան զինվորական գործի հմտություն եւ պատերազմի դաժանությունից... չկոշտացող էություն:

Ինքս իմ հարցի պատասխանն ունեմ. մեր Վահագն վիշապաքաղը, արդյոք, զինվորական պատրաստություն էր անցել, որ կարողացել է խավարին ընդդեմ ելնել ու հաղթանակել:

Մեր բոլոր ֆիդայիներն էլ իրենց լուսեղեն կերպարներով պարզ ու հասարակ շինականներ էին, տարբեր զբաղմունքի տեր՝ շատ հեռու ռազմական գործից եւ իբրեւ վիշապաքաղի զարմեր են մարտնչել մեր հայրենիքը պատած խավարի դեմ: Եվ նրանց անմնացորդ նվիրումն էլ դարձել է տիրատուր օրհնություն՝ զինվորի, հրամանատարի, հայ հայի երազային շնորհքներով:

44-օրյա պատերազմի ժամանակ մեր ազատագրական շարժման բոլոր նահատակները կրկին առաջին շարքում էին: Հիմա էլ՝ օրավուր ահագնացող տագնապալի ժամանակում, մեր խոնարհված հայացքների առջեւ նրանք են՝ լուսապսակ, իրական հերոսների իրական կերպարներով, անձնուրացությամբ,խիզախությամբ հաղթանակներ նվաճելու անսասան հավատով:

...Որ ծնկած Արցախը կարողանա ձեռքը իր ծնկին տա ու կորացած մեջը շտկի:

...Որ կարող ենք, որ չենք փոխվել, որ նույն զարմից ենք... եւ որ Վիշապաքաղի առասպելը իրապատում է...

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ,
մեր սեփական թղթակից

Հայտարարություն

«Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- ՀՀ քաղաքացիությունը.

- ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***2023 թվականի հունվարի 11-ից մինչեւ 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից մինչեւ ժամը 17:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից,*** *«Արարատի պետական բժշկական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Արարատ, Խանջյան 63:

Մրցույթը տեղի կունենա ***2023 թվականի փետրվարի 9-ին՝ ժամը 11:00-ին,*** *«Արարատի պետական բժշկական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Արարատ, Խանջյան 63:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 4-41-04 հեռախոսահամարով: էլեկտրոնային հասցե՝ abcollege@mail.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Հրուշակեղենի տեխնոլոգիա»* (91 դասաժամ), *«Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում»* (101 դասաժամ) մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների եւ հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլների) դասավանդողների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձեւ 1),

- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 4),

- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ 2023 թ. հունվարի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:30-16:00-ն, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2023 թ. հունվարի 26-ին՝ ժամը 12:00-ին,*** Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում. հասցե՝ ք.Երեւան, Վ.Ավանեսովի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-17-31, (010) 47-17-32 (091) 11-34-98, հեռախոսահամարներով:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Արարատի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ *«Խոհարարական գործ»* մասնագիտությամբ վարպետի, *«Կիրառական հավելվածների ստեղծման միջոցներ», «Օբյեկտ կողմնորոշված ծրագրավորման ներածություն», «Օբյեկտ կողմնորոշված մոդելի կիրառում»* մոդուլների (112 դասաժամ) բարձրագույն մասնագիտական կրթության որակավորմամբ դասախոսի թափուր տեղերի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատություն է ներկայացնում.

1) դիմում (Ձեւ 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***հունվարի 11-ից մինչեւ հունվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունվարի 26-ին՝ ժամը 14:00-ին,*** Արարատի պետական քոլեջում, հասցե՝ ք. Արարատ, Խանջյան 67:

Տեղեկությունների համար զարգահարել՝ (0234) 4-41-01, (099) 97-27-47 հեռախոսահամարներով: էլեկտրոնային հասցե՝ collegararat@mail.ru:

Հայտարարություն

«Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ զինղեկի, (ՆՁՊ դասախոսի) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (ձեւ 1),

2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ, բնօրինակը եւ պատճենը),

3. Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (ձեւ 4)

6. 1 լուսանկար (3X4)

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ ՀՀ-ի համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտար երկրացիների

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***2023 թ. հունվարի 11-ից մինչեւ հունվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2023 թ. հունվարի 27-ին՝ ժամը 14:00-ին՝*** Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջում, հասցե՝ ք. Ստեփանավան, Երիտասարդական 47:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0256) 2-22-80, (091) 90-92-30 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

«Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- ՀՀ քաղաքացիությունը.

- ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Աբովյանի պետական էներգետիկական քոլեջում, ***2023 թվականի հունվարի 11-ից մինչեւ հունվարի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչեւ ժամը 17:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից:***

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի փետրվարի 9-ին՝ ժամը 11:00-ին,** *«Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4:

Տեղեկությունների համար զանգահարել (077) 33-84-31 հեռախոսահամարով: էլեկտրոնային հասցե՝ annaabovyan0782@gmail.com:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Վանաձորի պետական բժշկական քոլեջ»* ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- ՀՀ քաղաքացիությունը.

- ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Վանաձորի պետական բժշկական քոլեջում, ***2023 թվականի հունվարի 11-ից մինչեւ հունվարի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչեւ ժամը 14:30-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2023 թվականի փետրվարի 9-ին՝ ժամը 14:00-ին,*** *«Վանաձորի պետական բժշկական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թեւոսյան 8:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0322) 4-06-10 հեռախոսահամարով: էլեկտրոնային հասցե՝ vanmedcollege@bk.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ *«Երեւանի արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի ուսուցչի (22 ժամ), *«Էլեկտրական սարքերի, մեքենաների եւ ապարատների փորձարկում»* (1 դրույքաչափ), *«Հրուշակեղենի տեխնոլոգիայի»* վարպետի (1 դրույքաչափ) թափուր տեղերի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում,

2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ(դիպլոմ)(բնօրինակը եւ պատճենը),

3. Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը)

4. Աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք(Առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն,

6. Մեկ լուսանկար 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ(բնօրինակը եւ պատճենը):

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան,կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***հունվարի 11-ից մինչեւ հունվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հունվարի 26-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի արհեստագործական պետական ուսումնարանում, հասցե՝ ք. Երեւան Նոր Նորքի 4 զանգված, Գյուլիքեւխյան 20:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 63-40-70 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Նոյեմբերյանի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Խոհարարական գործ»* մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոսի (արտադրական ուսուցման վարպետի) թափուր տեղի համար:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձեւ 1),

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը եւ պատճենը),

3. անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8. ՀՀ արական սեռի քաղաքացուները՝ նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են մինչեւ 2023 թ. հունվարի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. հունվարի 26-ին ժամը՝ 11:00 -ին, Նոյեմբերյանի պետական քոլեջում, հասցե՝ ք. Նոյեմբերյան, Շիրազի 17:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ *«Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնարանի *«Կարի արտադրության տեխնոլոգիա»* մասնագիտական խմբի վարպետի (1 դրույք) եւ 2-րդ կիսամյակի համար *«Հագուստի հանգույցների մշակման նոր մեթոդներ»* (36 ժամ), *«Հագուստի ոճերի պատմություն»* (36 ժամ), *«Մասնգիտության հիմունքներ»* (38 ժամ), *«Ձեռքի եւ մեքենայի կարատեսակներ»* (18 ժամ), *«Մանր մասնիկների մշակում»* (18 ժամ) ընդհանուր մասնագիտական եւ հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլ), միջին մասնագիտական խմբի *«Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»* մասնագիտության արտադրատեխնոլոգիական պրակտիկա (360 ժամ), *«Ոսկերչություն»* մասնագիտական խմբի վարպետի (1 դրույք) դասավանդողի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- Դիմում,

-Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

- Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը)

- Աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք(Առկայության դեպքում),

- Ինքնակենսագրություն,

- Մեկ լուսանկար 3x4 չափի,

- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը):

- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան,կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***2023 թ. հունվարի 11-ից մինչեւ 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2023 թ. փետրվարի 2-ին, ժամը՝ 14:00-ին,*** ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Վարդենիսի *«Բաղեյան»* պետական քոլեջում, հասցե՝ ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 87-58-02 հեռախոսահամարով:

Հայտարարություն

«Ստեփանավանի պրոֆեսոր Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ *«Տեխնիկական»* (1 դրույք), *«Հաշվապահական»* (տնտեսագիտական առարկաների, 1 դրույք) եւ *«Անասնաբուժական»* (1 դրույք) առարկաների դասախոսի թափուր տեղերի համար:

Դասախոսի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը եւ աշխատանքային ծանրաբեռնվածությունը որոշում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումը անցկացվելու է բանավոր հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին ըստ ՀՀ ԿԳՄՍՆ նախարարի 24.12.2020 թ, թիվ 48-Ն հրամանով նախատեսված կարգի:

Մրցույթին մասնակցելու համար անձը քոլեջ է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը:

1. Դիմում (ձեւ 1),

2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ, բնօրինակը եւ պատճենը),

3. Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (ձեւ 4)

6. 1 լուսանկար (3X4)

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ-ի համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտար երկրացիների

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***2023 թ. հունվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2023 թ. հունվարի 26-ին՝ ժամը 14:00-ին՝*** Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջում: Հասցեն ք. Ստեփանավան, Երիտասարդական 47:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0256) 2-22-80, (091) 90-92-30 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ *«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում»* (424 ժամ), *«Քաղաքացիական պաշտպանության եւ արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», «Նախնական մասնագիտական պատրաստվածություն»* (238 ժամ), մոդուլների (դասընթացի բնույթին համապատասխան միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն որակավորմամբ) դասախոսի թափուր տեղերի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- դիմում (Ձեւ 1),

- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 4),

- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ 2023 թ, հունվարի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2023 թ, հունվարի 23-ին՝ ժամը 16:00-ին,*** *«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աթարբեկյան 156:

Տեղեկությունների համար զանգահարել (0235) 2-40-81, (093) 01-37-80 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի *«Վանաշենի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

